

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՀԱՐՅՐ  
ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1967-1973թթ.)\***

Գնդադես Գուրգեն Նալբանդյանի  
գաղսնի զեկուցագիրը և կից փաստաթղթերը

1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի դայմանագրերի usու-  
րագրումից հետո՝ ԽՍՀՄ-ի գոյության շուրջ 70 տարիների ընթացքում, խորհրդա-թուրքական  
(փաստորեն՝ հայ-թուրքական) սահմանի օրինականության հարցը վերածվել էր միջազգա-  
յին, միջդրեսական և ազգամիջյան բարդ հիմնախնդրի: Տասնամյակներ շարունակ այդ  
դայմանագրերը դարձել էին մի կողմից՝ Թուրքիայի ու ԽՍՀՄ-ի, մյուս կողմից՝ Խորհրդային  
Հայաստանի ու ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների տարաձայնությունների առաւ-  
կան: Հայ ժողովրդի արմատական շահերի հաշվին տեղի ունեցած «Լեւին-Աթաթուրք» գոր-  
ծարքը շարունակում էր մնալ մաս Սփյուռքի ազգային- բաղախական շրջանակների ուժա-  
րության կենտրոնում: Բնական է, որ Խորհրդային Հայաստանում ու Սփյուռքում չէին կարող  
անտարբեր լինել խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանազծման՝ Պարբերական  
բնույթ ստացած աշխատանքների հանդեպ, որքան էլ որ դրանք գոնե՝ արտաֆուս, սեխնիկա-  
կան բնույթ ունենային:

Թվում էր, թե այդպիսին է լինելու մաս Անկարայում 1967թ. փետրվարի 28-ին  
երկու կառավարությունների ստորագրած ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սահմանի  
վերասահմանազծման մասին Արձանագրությանը համապատասխան ստեղծված

\* Դեռևս ԽՍՀՄ-ի գոյության շրջանում հայկական հողերի զավթումը փաստաթղթերի միջոցով ամրագրելու ձգտումը Թուրքիան  
դարձրել էր իր սևեռուն նպատակը: Ուստի, խորհրդա-թուրքական ցանկացած միջոցառում համառորեն փորձում էր վերածել թուրք-  
խորհրդային սահմանը երաշխավորող մի նոր հայտարարություն կորզելու առիթի: 1973թ. դեկտեմբերին Անկարայում կայացած  
Թուրքիայի ու ԽՍՀՄ-ի պետական սահմանի վերասահմանազծման Համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը հենց  
մնան առիթ էր թվում: Մեծ էր, սակայն, թուրքական կողմի գարնանքը, երբ ի տարբերություն ԽՍՀՄ-ի դիվանագետների  
անտարբերության ու զիջողականության, փոխադարձ սահմանների ճանաչման հերթական հայտարարագիրը կորզելու փորձերի  
դեմ ըմբոստացավ բանակցություններում խորհրդային Հայաստանը ներկայացնող գնդապետ Գուրգեն Նալբանդյանը: Անկախ  
պետություն չհանդիսացող խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը չստորագրեց փոխադարձ սահմանների  
ճանաչման քաղաքական դրույթը պարունակող խորհրդա-թուրքական եզրափակիչ Կոմյունիկեն: Եվ այսօր, երբ այդ  
քայլին է դիմում անկախ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հայ-թուրքական սահմանի վերանայման  
մասին խորհրդային գնդապետ Գուրգեն Նալբանդյանի հարցադրումներն ու առաջարկները ձեռք են բերում ոչ միայն  
պատմաճանաչողական, այլև արդիական-քաղաքական նշանակություն: Խմբ.

Ընդունվել է տպագրության 17.08.2009:

Խորհրդա-թուրքական Համատեղ հանձնաժողովի աշխատանքը: Խորհրդա-թուրքական Արձանագրությունը ուժի մեջ մտավ 1968թ. նոյեմբերի 5-ին<sup>1</sup>: Այդ փաստաթղթի 9-րդ հոդվածը ցանկալի էր համարում աշխատանքներն ավարտել ոչ ուշ քան 2 տարում, իսկ հավելյալ Տեխնիկական արձանագրության մեջ նշվում էր, որ յուրաքանչյուր պատվիրակություն պետք է ունենար հետևյալ կազմը. 12 հոգի, 1 նախագահ, 1 տեղակալ, 5 անդամ, 3 անդամ-փորձագետ, 1 քարտուղար, 1 թարգմանիչ: Սակայն, այս Արձանագրությունում ևս չկար որևէ քաղաքական նախապայման, այսինքն՝ լուծքյան միջոցով շրջանցվում էր խորհրդա-թուրքական սահմանի օրինականության հարցը<sup>2</sup>:

Նման մոտեցումը պայմանավորված էր նրանով, որ ԽՍՀՄ ղեկավարությունը մինչ այդ բանավոր հայտարարությունների միջոցով էր միայն հրաժարվել Երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիային առաջադրած տարածքային պահանջներից: Բնական է, որ ԽՍՀՄ ղեկավարության կողմից ժամանակավորապես սառեցված նման լրջագույն խնդրի առկայությունը լրացուցիչ լարվածություն էր հաղորդում վերասահմանագծման հարցերով խորհրդա-թուրքական Համատեղ հանձնաժողովի աշխատանքներին: Նրա ողջ ժամանակամիջոցում ու մանավանդ՝ 1973թ. դեկտեմբերին Անկարայում կայացած եզրափակիչ նստաշրջանում թուրքական կողմն ամեն ինչ անում էր խորհրդա-թուրքական սահմանի անձեռնմխելիության մասին լրացուցիչ հավաստիացումներ կորզելու համար:

Նման պայմաններում Համատեղ հանձնաժողովում Խորհրդային Հայաստանը ներկայացնող գնդապետ Գուրգեն Նալբանդյանը, հայտնվելով Անկարայում ԽՍՀՄ դեսպանատան դրսևորած անտարբերության փաստի առաջ, համարձակորեն դիմագրավեց թուրքական կողմի անհիմն նկրտումները:

Մասնավորապես, երբ 1971թ. փետրվար-մարտին Համատեղ հանձնաժողովի խորհրդային պատվիրակությանը թույլ չէին տվել մեկնել Արևմտյան Հայաստան, Հայկական ԽՍՀ արտգործնախարարությանը ներկայացրած իր հաշվետվության մեջ Գ. Նալբանդյանը գրում էր. «Ամբողջության մեջ թուրքական ժողովուրդը գոյատևում է իր կողմից նվաճված օտար հողերի առատության և բնության գրեթե անսպառ պարզների հաշվին: Ինքը թուրքը որպես այդպիսին, դեռևս գտնվում է սահմանափակվածության, բթամտության և անգործուն վիճակում, նա շատ է հեռու այն հոգեբանական խոչընդոտի հաղթահարումից, որի ետևում իրեն թույլ կտար մտածել քաղաքական, տնտեսական և մշակութային առաջադիմության մասին»<sup>3</sup>:

Նույն փաստաթղթի մեկ այլ հատվածում նա նշում էր. «Իրենց իսկ սեփական հողերի վրա և իրենց սեփական տներում կոտորված միլիոնավոր հայերի ցեղասպանությունը մինչ այժմ չի դատապարտվել, ավելին, ցեղասպանության անմիջական կազմակերպիչները՝ իրենց առջև հայերին ամբողջովին ոչնչացնելու խնդիր դրած սուլթան

<sup>1</sup> Արձանագրությունը տես ՉԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, ք. 32-36:

<sup>2</sup> Տես ՉԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, ք. 33-43:

<sup>3</sup> Տես ՉԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 480, ք. 19:

Մեհմեդը (թերևս՝ Համիդը - Ա. Հ.), Թալեսթ փաշան, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան, Իսմեթ փաշան, Կարաբեքիրը և այլք, որպես ժողովրդական հերոսներ ժողովրդականացվում են: Ոչ պակաս կարևոր դեր է խաղում դրանում և վաղնջական հայկական հողերի հարցը»<sup>4</sup>:

Ի վերջո, Համատեղ հանձնաժողովը 1969թ. հունվարին սկսեց և 1973թ. դեկտեմբերի վերջին ավարտեց 616,5 կմ տարածություն ընդգրկող պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքները: Իսկ թուրքական կողմի երկարատև ձգձգումներից հետո՝ 1973թ. դեկտեմբերի 1-ից 29-ը Անկարայում հրավիրված պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը թուրքական կողմի խարդավանքների հետևանքով վերածվեց սուր բանավեճերի քատերաբեմի:

Հանձնաժողովն ի սկզբանե ի գորու էր զբաղվել միմիայն տեխնիկական բնույթ ունեցող գործառնությունով: Սակայն Թուրքիան ներկայացնող դիվանագետների, զինվորականների և այլ պաշտոնյաների կողմից Անկարայում սկիզբ առավ հարցի հետևողական քաղաքականացումը, որը ծանր վիճակի մեջ դրեց այդ ամենին անպատրաստ խորհրդային պատվիրակությանը: Այս պայմաններում ԽՍՀՄ պատվիրակությունում Հայկական ԽՍՀ պաշտոնական ներկայացուցիչ, ԽՍՀՄ պետանվտանգության համակարգի պաշտոնաթող գնդապետ Գուրգեն Մեդրակի Նալբանդյանը, փաստորեն մնալով միայնակ, իր համառության ու հաստատակամության շնորհիվ բավականին մեծ ծավալի աշխատանք կատարեց՝ թուրքական կողմի նպատակների բացահայտման, ԽՍՀՄ մյուս պատվիրակներից անկախ, ինքնուրույն քաղաքական դիրքորոշում բանաձևելու և այն հետևողականորեն պաշտպանելու համար: Գ. Նալբանդյանը խորհրդա-թուրքական պետական սահմանի անփոփոխելիության մասին քաղաքական դրույթը վերասահմանագծման վերաբերյալ տեխնիկական փաստաթղթի մեջ խցկելու՝ թուրքական կողմի համառ պահանջը ԽՍՀՄ-ի և համար առավել ևս՝ Հայկական ԽՍՀ-ի բացարձակապես անընդունելի էր համարում:

Նա իրավացիորեն քննադատում էր խորհրդային պատվիրակության ղեկավարության պահվածքը, որը Թուրքիայի ԱԳՆ-ի գրեթե բացահայտ թելադրանքի պայմաններում, առանց ԽՍՀՄ ղեկավար որևէ մարմնի թույլտվության, դուրս եկավ իր իրավասության շրջանակներից և գնաց անտեղի քաղաքական զիջումների: Այդ իսկ պատճառով Գ. Նալբանդյանը հենց սկզբից անհրաժեշտ համարեց կոշտ դիրքորոշում դրսևորել, որովհետև նրա համոզմամբ՝ թուրքերը ցանկանում էին հայկական հողերի նվաճման փաստը ճանաչող նոր քաղաքական փաստաթուղթ ստանալ:

Հիմնախնդիրը դիտարկելով համազգային շահերի համատեքստում՝ նա նաև խազգուշացնում էր, որ խորհրդային դիվանագիտության վրիպումները ամբողջ աշխարհում կարող են առաջ բերել հայ հասարակայնության բացասական հա-

<sup>4</sup> Տես նույն տեղում, ք. 32-33:

կազդեցությունը: Ուժադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ Սփյուռքը խիստ զգայուն է հայկական հողերի մեծ մասը նվաճած Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի հարաբերությունների հարցում, Գ. Նալբանդյանը միաժամանակ արձանագրում էր հայ ժողովրդի հողային կորուստների ու Հայոց ցեղասպանության անխզելի կաղի ու փոխադանաձևավորվածության փաստը: Դրանով նա զգուշացնում էր, որ ճանաչելով հայկական հողերի զավթման փաստը, ԽՍՀՄ-ը փաստորեն հերքում է ցեղասպանության իրողությունը: Ուստի, լինելով խորհրդային «ինքնիշխան», իսկ իրականում ընդամենը՝ «միութենական» հանրապետության պաշտոնական ներկայացուցիչ, Գ. Նալբանդյանը թուրքական կողմի նկրտումները չեզոքացնող որոշակի առաջարկներ, առարկություններ, խնդրանքներ ներկայացրեց, սակայն դրանք բոլորն էլ անտեսվեցին:

Եվ ահա եկավ թուրքերի համար վաղուց այդքան սպասված օրը: Նրանք կարծես թե հասել էին իրենց նպատակին. Անկարայի ԽՍՀՄ ղեսպանատունը համաձայնվել էր պետական սահմանի անփոփոխելիության մասին դրույթը ներառել վերասահմանագծման վերաբերյալ տեխնիկական փաստաթղթում, իսկ Մոսկվայից այդ առիթով ժամանած խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաները սպասում էին միայն եզրափակիչ Կոմյունիկեի ստորագրմանը և հանդիսավոր բանկետին: Սակայն այդ ամենը կրկին վերածվեց սև մղձավանջի, երբ ԽՍՀՄ միասնական պատվիրակության մեջ մտնող Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Գուրգեն Նալբանդյանը բացահայտ կերպով ըմբոստացավ, և ի տարբերություն իր գործընկերոջ՝ վերջին պահին սեփական տեսակետից հետ կանգնած՝ Խորհրդային Վրաստանի պատվիրակ, պատմաբան Օ. Գիզինեյշվիլիի, հրաժարվեց ստորագրել եզրափակիչ Կոմյունիկեն և մասնակցել այդ առիթով խորհրդային հյուրերի պատվին կազմակերպված շքեղ բանկետին:

Որպես բողոքի նշան՝ 72-ամյա գեղապետ Գուրգեն Նալբանդյանը պաշտոնապես հայտարարեց, որ հանդիսություններին ներկա չի գտնվելու և փաստաթղթերի ստորագրմանը մասնակից չի լինելու: Եվ այդպես էլ վարվեց, քանզի իր իսկ խոսքերով՝ այդ ամենն անում էր, որպեսզի թուրքերին, ինչպես նաև խորհրդային դիվանագետներին հասկացնի, որ հայկական հողերի հարցը օրակարգից չի հանվել:

Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանի ավարտից անմիջապես հետո վերադառնալով Երևան, հենց հաջորդ օրը՝ 1973թ. դեկտեմբերի 31-ին, Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը ներկայացրած իր ընդարձակ, մանրամասն ու փաստարկված զեկուցագրում գնդապետ Գուրգեն Նալբանդյանը համարձակորեն քննադատում էր ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարության պահվածքը, որը Թուրքիայի ԱԳՆ-ի գրեթե բացահայտ թելադրանքի պայմաններում, առանց ԽՍՀՄ ղեկավար որևէ մարմնի թույլտվության, դուրս եկավ իր իրավասության շրջանակներից և գնաց անհիմն քաղաքական գիշումների:

**ԳՈՒՐԳԵՆ ՍԵՂՐԱԿԻ ՆԱԼԱՆԴՅԱՆ**  
Կենսագրական համառոտ ակնարկ



Ո՛վ էր ի վերջո այն հայրդին, ով իր ամբողջ կյանքն անձնացորդ նվիրելով խորհրդային իսխանությանը, այդուհանդերձ, ըմբոսացավ հենց նույն սովետների դեմ անվեհեր կեղծովմա-բառելով հանուն Հայ Դասի

Գուրգեն Սեղրակի Նալբանդյանը ծնվել է 1902թ. հունիսի 6-ին Մեծ Դարափլիսայում (ներկայումս՝ Վանաձոր), որտեղից ընթանալով սեղափոխվել է մինչև 1917թ. աղբյուր է Սարի-ղամիսում: Հայրը՝ Սեղրակ Մարտիրոսի Նալ-

բանդյանը, զոհվել է 1918թ. Դարափլիսայի հերոսամարտի ամենադաժան կռիվներից մեկում՝ Հաջիդարա (Լեռնադաս) գյուղի համար անհավասար մարտում, որտեղ հայ զինվորականների ու գյուղացիների դրսևրած արիությունից ցնցվել էր անգամ թուրքական զորքերի հրամանատարությունը

Դեռևս մինչև հոր մահը՝ 1916 թվականին, դասանի Գուրգենը ընդունվել է Հյուսիսային Կովկասի հայաժառ Արմավիր ֆաղափի ֆառդասյա դպրոցը, իսկ 1918թ. մտել կարմիր բանակի շարքեր: Նա 1929թ. գերազանցությամբ ավարտել է Կրեմլի միացյալ զինվորական դպրոցը, առյա ծառայել 40-րդ Երևանյան սահմանադահ ջոկատում Մինչև 1938թ. Գուրգեն Նալբանդյանը սահմանադահ ջոկատի ղեկի սեղակալ էր, իսկ ահա 1938թ.-ից սկսած ծառայել է Հայկական սահմանադահ օկրուգի զորքերի վարչությունում որդես 5-րդ (հեսախուգական) բաժնի բաժանմունցի ղեկ 1943թ. ավարտել է Մ. Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիայի արագացված կուրսերը և նշանակվել նշյալ օկրուգի զորքերի ղեկի սեղակալ-5-րդ բաժնի ղեկ և որդես օղերասիվ խմբերի ղեկ մասնակցել է Անդրկովկասի համար մղված բոլոր մարտական գործողություններին: 1951թ. դաժոնաթող է եղել, 1952-1957թթ. աշխատել է ՀԽՍՀ Սննդի արդյունաբերության նախարարությունում, 1958թ.-ից՝ Արևելի նախարարի օգնական: Եղել է նաև ՀՀ սահմանադահ զորքերի վեներանների խորհրդի դասվալոր նախագահը: Մահացել է 1998թ. 96 տարեկան հասակում: Իրավամբ համարվել է Խորհրդային Հայաստանի սահմանադահ զորքերի դասրիարքը: Պարգևատրվել է Լենինի, Մարտական Կարմիր Դրոշի երկու, Հայրենական դասերազմի 1-ին ասիժանի շխանաններով, 22 մեդալներով, 8 կրծքանշաններով, բազմաթիվ դասվոգրերով: Ծառայության ժամանակ և անգամ դաժոնաթողությունից հետո եղել է թուրք սահմանադահների սարսափը և նրանց կողմից անվանակոչվել «Նալբանդ փաժա»:

«ՎԷՄ»-ի ներկա Հավելվածում հրապարակվող փաստաթղթերը լուսաբանում են վերասահմանագծման հարցերով Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքները և Հայկական ԽՍՀ պաշտոնական ներկայացուցիչ, գնդապետ **Գուրգեն Մեղրակի Նալբանդյանի** Անկարայում ծավալած գործունեությունը: 1960-ականների վերջերին-1970-ականների սկզբներին Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման ընթացքում առաջ եկած քաղաքական հարցերի բարդ թնջուկի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու համար թարգմանաբար հրապարակում ենք գնդապետ **Գուրգեն Նալբանդյանի Ջեկուցագիրը**, Խորհրդա-թուրքական համատեղ **Կոմյունիկեի** տեքստը, նրա տարբեր **նախագծերը** և այս հարցի վերաբերյալ **ԽՍՀՄ** պաշտոնական շրջանակների գնահատականները պարունակող՝ «**ՏԱՄՍ**» լրատվական գործակալության **հաղորդագրությունն** ու «**Պրավդա**» պաշտոնաթերթի **հրատարակումը**: Ներկայացվող փաստաթղթերն ու նյութերը հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն Հայ Դատի պատմության ուսումնասիրության, այլև արդիական-քաղաքական առումով: Փաստաթղթերը հայերեն թարգմանությամբ տպագրվում են առաջին անգամ:

ՀԱՄԵԼՎԱԾ

Ա. Հ.

թիվ 2(27) հուլիս-սեպտեմբեր 2009

ՎԷՄ համահայկական հանդես

VI

## ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

### ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԱՆԻ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՍԱՆՔԻ ՄԱՍԻՆ<sup>5</sup>

1973թ. դեկտեմբերի 1-ից 29-ը Թուրքական հանրապետության մայրաքաղաք Անկարայում կայացավ պետական սահմանի վերասահմանագծման [ռեդեմարկացիայի] Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը:

Համաձայն թուրքական պատվիրակության ղեկավարության հետ նախնական պայմանավորվածության եզրափակիչ նստաշրջանը պետք է գումարվեր 1973թ. սեպտեմբերին, սակայն թուրքերը, տարբեր հարմար պատրվակներով, ամբողջ ժամանակ հետաձգում էին նստաշրջանի գումարումը: Ունենալով իրենց համար կարևոր, բայց Խորհրդա-թուրքական հանձնաժողովի իրավասության շրջանակների մեջ չնտնող մի հարցի լուծման որոշակի նպատակներ, նրանք նստաշրջանը հասցրին մինչև տարվա վերջը, այսինքն՝ Նոր տարվա նախօրյակը, երբ տարվա ավարտի հետ կապված ծառայողական միջոցառումները միախլուսվում են տոնական պատրաստությունների հետ և մարդկանց տրամադրության տակ չափազանց քիչ ժամանակ են թողնում շտապողականություն չհանդուրժող պետական նշանակության հարցերը կշռադատելու և լուծելու համար:

Թուրքերը դա արեցին ծրագրավորված, մենք էլ նրանց հաշվարկներին լուրջ նշանակություն չտվեցինք և չկռահեցինք նրանց մտադրությունը:

Բոլոր հիմունքներով, պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը, որի հիմնական հարցը վերասահմանագծման փաստաթղթերի ստորագրումն էր, պետք է գումարվեր, ըստ հերթականության, քաղ. Մոսկվայում: Կային նաև այլ փաստարկներ. վերասահմանագծումն իրականացվել էր Խորհրդային Միության նախաձեռնությամբ, իսկ ԽՍՀՄ-ը և Թուրքիան ոչ հավասար մեծության աշխարհագրական, քաղաքական և տնտեսական հասկացություններ են:

Անհասկանալի պատճառներով Խորհրդային պատվիրակությունը, քամահրելով ԽՍՀՄ-ի հեղինակությունը, զիջումների գնաց թուրքերին և համաձայնվեց վերասահմանագծման փաստաթղթերի ստորագրմանը ք.Անկարայում<sup>6</sup>:

Դրանով իսկ թուրքերը իրենց ապահովեցին ձեռնտու դիրքեր այն բանի համար, որպեսզի ճնշում բանեցնեն վերադաս մարմիններից մեկուսացման մեջ գտնվող Խորհրդային պատվիրակության վրա և ստիպեն նրան ստորագրել Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի իրավասության մեջ չնտնող քաղաքական փաստաթուղթ:

Ժամանակին մենք Խորհրդային պատվիրակության ղեկավարության ուշադրությունը հրավիրել էինք այդ կարևոր իրողության վրա, սակայն այդ հարցի շուրջ մեր բոլոր ճշմարիտ առաջարկությունները մնացին չքննարկված և առանց պատշաճ արձագանքի:

Գործի ելքն ամբողջությամբ հաստատեց մեր ենթադրությունները և մտավախությունները:

Պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանի աշխատանքին մասնակցեցին.

Խորհրդային պատվիրակությունը հետևյալ կազմով.

Նախագահ – ԽՍՀՄ դեսպան Պավել Կոնստանտինի Երմոլչին<sup>7</sup>,

Նախագահի տեղակալ – գեներալ-մայոր Պյոտր Սերգեյի Իվանով,

Պատվիրակության անդամներ.

ԽՍՀՄ ԱԳՆ Խորհրդական – Ալեքսանդր Վասիլիի Բեսսոնով,

ԽՍՀՄ զինված ուժերի Գլխավոր շտաբի գլխավոր քարտեզագրական վարչության ներկայացուցիչ – գնդապետ Վիկտոր Գրիգորիի Ժիրկով,

<sup>5</sup> Ձեկուցագիրը հասցեագրված է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանին, ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին, Նախարարների Խորհրդի նախագահ Գ. Ա. Արզումանյանին, Արտաքին գործերի նախարար Կ. Բ. Ուրումյանին: Ա. Ե. Քոչինյանի ազգանունը ընդգծված է: Վերին անկյունում հեղինակի կողմից ձեռագրով ավելացված է հետևյալ նշումը՝ «գաղտնի»: Փաստաթուղթը ՀԿԿ Կենտկոմում մուտքագրվել է 1974թ. հունվարի 16-ին:

<sup>6</sup> Պարբերության դիմաց ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

<sup>7</sup> Երմոլչին Պ. Կ. – ծնվել է 1907թ.: 1930թ. ավարտել է Կազանի մանկավարժական ինստիտուտը, 1941թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԱԳՆ-ում, 1954-1958թթ. եղել է ԽՍՀՄ դեսպանը Իսլանդիայում, 1960-1968թթ.՝ Կիպրոսում:

Վրացական ԽՍՀ ներկայացուցիչ – պատմական գիտությունների թեկնածու Օթարի Իսիդորի Գի-գինեյշվիլի,

Հայկական ԽՍՀ ներկայացուցիչ – գնդապետ Գուրգեն Սեդրակի Նալբանդյան,

Պատվիրակության քարտուղար – կցորդ Դմիտրի Անատոլիի Վասիլև,

Պատվիրակության թարգմանիչ – Ալեքսանդր Լևի Պրիշչեպով:

Պատվիրակության կազմից գեներալ Իվանովի միանձնյա պնդմամբ և որոշմամբ ապօրինաբար հեռացվեցին և եզրափակիչ նստաշրջանին չմասնակցեցին գնդապետներ Բ.Ա. Շուշունովը, Պ.Ի. Շեստակովը, փոխգնդապետ Մ.Կ. Ջավերսկին և մայոր Պ.Լ. Նասելեվցը<sup>8</sup>:

Անհրաժեշտ են համարում հատուկ ընդգծել փոխգնդապետ Մ.Կ. Ջավերսկու և մայոր Պ.Լ. Նասելեվցի ծառայությունները պատվիրակության աշխատանքներում, նրանց բացառիկ սկզբունքայնությունն ու հետևողականությունը՝ վերասահմանագծման բոլոր հարցերի լուծման նկատմամբ մոտեցումներում և բարեխիղճ վերաբերմունքը գործի հանդեպ:

Գեներալ Իվանովը համառորեն ձգտում էր նաև պատվիրակությունից Վրացական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ ներկայացուցիչների հեռացմանը, բայց հանդիպեց ԽՍՀՄ ԱԳՆ խորհրդական Ա. Վ. Բեստոնովի վճռական առարկությանը և ստիպված էր համաձայնել պատվիրակության մախազահ Երմոշինի որոշման հետ՝ հրավիրելու Օ.Ի. Գիգինեյշվիլիին և Գ.Ս. Նալբանդյանին եզրափակիչ նստաշրջանին: Այսպիսով, խորհրդային պատվիրակությունը նստաշրջանում ներկայացված էր թուլացված կազմով:

Թուրքական պատվիրակությունը նստաշրջանին ներկայացված էր ամբողջ կազմով, ավելին՝ նստաշրջանի աշխատանքին մասնակցեցին համապատասխան պայմանագրային փաստաթղթերում չհիշատակված առանձին անձինք:

Եզրափակիչ նստաշրջանում թուրքական պատվիրակության կազմում ընդգրկվեցին.

Պատվիրակության նախագահ – Թուրքիայի դեսպան Մուստաֆա Քենանօղլու,

Նախագահի տեղակալ – կենտրոնում ծառայող նահանգապետ Մեհմետ Թարջան,

Անվտանգության զլխավոր վարչության ներկայացուցիչ – մշյալ վարչության հակահետախուզության դեպարտամենտի տնօրեն Նեջեդ Կահրաման,

Ժամդարներիայի զլխավոր վարչության ներկայացուցիչ – գնդապետ Խըղըր Աբպընար,

Թուրքական հանրապետության ԱԳՆ խորհրդական – իրավաբան, դոկտոր Գեկհան Ունսալ,

Թուրքական բանակի Գլխավոր շտաբի ներկայացուցիչ – գնդապետ Քյամիլ Աքսու,

Գլխավոր շտաբի քարտեզագրական վարչության բաժնի պետ – գնդապետ Հայաթի Բալկան,

Ջրային պաշարների վարչության ավագ ինժեներ – Ռեջեպ Ուստյուներ,

Քարտուղար – Գլխավոր շտաբի քարտեզագրական վարչության փոխգնդապետ Թուրան Օզալպ,

Թարգմանիչ – Մեհմետ Կուրբանօղլու:

Նստաշրջանը 1973թ. դեկտեմբերի 3-ի առաջին նիստում հաստատեց օրակարգ՝ հետևյալ հարցերով.

1. Բոլոր վերասահմանագծման փաստաթղթերի վերջնական փոխադարձ համեմատություն և սխալների ուղղում,

2. Վերասահմանագծման փաստաթղթերի ստորագրում,

3. Բարձր Պայմանավորվող Կողմերի ներկայությամբ վերասահմանագծման փաստաթղթերի ստորագրման հանդիսություն,

4. Խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման մասին ԽՍՀՄ և Թուրքական հանրապետության մամուլին հաղորդագրության ընդունում և ստորագրում:

Եզրափակիչ նստաշրջանի բացումից առաջ որոշույնի ճառում թուրքական պատվիրակության նախագահ Մուստաֆա Քենանօղլուն չորս անգամ որոշակի վճռականությամբ ընդգծեց հանձնաժողովի կողմից փաստաթղթի ստորագրման անհրաժեշտությունը, «որը կերաշխավորի թուրք-խորհրդային պետական սահմանի անփոփոխելիությունը»<sup>9</sup>:

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, թթ. 94-103: Բորիս Ալեքսանդրի Շուշունովը սահմանապահ գործերի ներկայացուցիչն էր, Պյոտր Իվանի Շեստակովը՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգի շտաբի, Միխայիլ Կիրիլի Ջավերսկին՝ սահմանապահ գործերի, Պյոտր Լարիոնի Նասելեվցը՝ Գլխավոր շտաբի քարտեզագրական վարչության: Մինչ այս՝ նրանք բոլորն անխտոր պաշտոնապես անդամակցել են խորհրդային պատվիրակության աշխատանքներին:

<sup>9</sup> Չակետների մեջ եղած բառերը ծախ լուսանցքում Ա. Քոչինյանն ընդգծել է:

Մուստաֆա Քեմալը լուի ճառից պարզ դարձավ, որ մստաշրջանի աշխատանքներում թուրքական պատվիրակության հիմնական նպատակը լինելու է Համատեղ հանձնաժողովի տեխնիկական իրավասության շրջանակներից քողարկված ձևով դուրս գալը և իրենց օգտին քաղաքական բնույթի նոր փաստաթղթի ստեղծումը, որը որոշում է խորհրդա-թուրքական հարաբերություններն ընդհանրապես և ամենազիլավորը՝ երաշխավորում է «թուրք-խորհրդային սահմանի անփոփոխելիությունը»<sup>10</sup>:

Դա, իհարկե, չէր կարող չզգաստացնել մեզ: Նստաշրջանի ընթացքը և հատկապես նրա աշխատանքի ավարտական փուլը ամբողջությամբ հաստատեցին մեր կռահումներն ու ենթադրությունները:

ԽՍՀՄ և Թուրքական հանրապետության կառավարությունների կողմից պետական սահմանի վերասահմանագծման մասին արձանագրության ստորագրումից հետո՝ իր գործունեության ընդհանուր արդյունքում, հինգ տարվա ընթացքում, խորհրդային պատվիրակությունը կատարել է հսկայական, բացառիկ կարևորություն աշխատանք: Վերասահմանագծումն իրականացվել է բարձր մակարդակով, խորհրդա-թուրքական պետական սահմանը պարզ և հստակ նշվել է հնարավորինս մեծացված քանակով սահմանապահ նշաններով:

Ամենաբարձր մակարդակով օրինակելիորեն ձևակերպված և կատարելագործված են վերասահմանագծման անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Խորհրդային պատվիրակությունը բոլոր կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներում անհրաժեշտ ընթացք էր տալիս թուրքական պատվիրակությանը: Թուրքական պատվիրակության անդամները բազմիցս հայտարարեցին այն մասին, որ «նրանք խորհրդային պատվիրակությունից շատ բան սովորեցին»:

1926թ. սահմանագծված խորհրդա-թուրքական պետական սահմանն ամբողջությամբ վերականգնված է: Պետական սահմանի վերասահմանագծման ընդհանուր արդյունքները, անկասկած, ԽՍՀՄ և Թուրքական հանրապետության տարածքային վերջնակետերի շփման գծի վրա նորմալ իրադրության ապահովման և նրանց բարիդրացիական հարաբերությունների լրացուցիչ գործոն կլինեն:

Արդարությունը պահանջում է շնորհակալությամբ նշել խորհրդային կողմի աշխատանքային և հսկողական խմբերի՝ սահմանի գծին անմիջապես կից, Թուրքիայի զինծառայողների հետ մշտական շփմամբ, հարակից տարածք բազմաթիվ պարզեցված անցումներով իրականացրած շատ ծանր, բարեխիղճ աշխատանքը: Հարյուրավոր խորհրդային զինվորներ ավելի քան երեք տարի, ամենածանր ռելեֆային և կլիմայական պայմաններում, սահմանի վրա իրականացրած վերասահմանագծման ողջ սևագործ աշխատանքը: Նրանք բոլորը՝ շարքայինից մինչև սպա, մարմնավորելով խորհրդային քաղաքացու ազնիվ կերպարը, միշտ գտնվեցին իրենց Հայրենիքի շահերի, պատվի, արժանապատվության և մեծության բարձրության վրա: Թուրքիայի աշխատանքային և հսկողական խմբերի զինծառայողներն ամեն ինչում զգում էին մեր զինվորների և սպաների առավելությունը: Արտասահման այցերի ժամանակ մենք հպարտությամբ և սիրով էինք դիտում մեր զինվորների և սպաների աշխատանքն ու պահվածքը: Հնարավոր չէր չհիանալ թուրքերի հետ սահմանի վերասահմանագծման հարցերի լուծման մեջ մեր սպա-սահմանապահներ, աշխատանքային և հսկողական խմբերի պետեր, փոխգնդապետներ ընկ. ընկ. Գուլուվի, Տյուլպիմի և Ռազուվակի հիմնավորված ու սկզբունքային անդրվելիությանը: Նրանք բոլորը արժանի են մեծ խրախուսման<sup>11</sup>:

Խորհրդային պատվիրակությունը պետական սահմանի վերասահմանագծման գծով կառավարական հանձնարարության կատարման մեջ իր հաջողություններով պարտական է Վրաստանի և Հայաստանի Կոմկուսների Կենտկոմների, Գերագույն խորհուրդների Նախագահությունների, Նախարարների խորհուրդների, Արտաքին գործերի նախարարությունների, սահմանապահ շրջանների կուսակցական և խորհրդային մարմինների մշտական հոգատարությանը և հսկայական օգնությանը:

Խորհրդային պատվիրակության, նրա աշխատանքային և հսկողական խմբերի ողջ անձնակազմը երախտապարտ ու շնորհակալ է Վրացական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ կուսակցական և խորհրդային մարմիններին: ԽՍՀՄ Կառավարության հանձնարարության կատարման հետ կապված տեղերում բոլոր հարցերի լուծումը ղեկավարելու, կազմակերպչական և նյութական օգնություն ցուցաբերելու համար:

Չունենալով Ախուրյան գետի վրա ջրամբարի կառուցման հարցում<sup>12</sup> խորհրդա-թուրքական համաձայ-

<sup>10</sup> Չակետների մեջ առնված նախադասության դիմաց ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

<sup>11</sup> Պարբերության վերջին երկու նախադասությունների դիմաց ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

<sup>12</sup> Անկարայում 1973թ. հոկտեմբերի 26-ին կնքվեց խորհրդա-թուրքական համաձայնագիր Ախուրյան սահմանային գետի վրա ջրամբար կառուցելու մասին: Այն ստորագրեցին Վ. Սերգեևը և Օ. Գյոքմենը: Տեքստը տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, թթ. 123-126: Ի դեպ, Ախուրյանի ջրամբարի կառուցման հարցը Հայկական ԽՍՀ ղեկավարությունը բարձրացրել էր դեռևս 1958թ.:

ճագրի եւթյան վերաբերյալ ոչ մի ղեկավար ցուցում և դիրքորոշում, խորհրդային պատվիրակությունը թուրքերի հետ չէր կարող դիտարկել և իրականացնել խորհրդա-թուրքական պետական սահմանի այդ հատվածում սահմանագծի անցկացման Արժանագրություն-նկարագրությունում սահմանապահ նշանների տեղադրության մեջ անհրաժեշտ ուղղումները: Հաշվի առնելով առաջիկա աշխատանքների բնույթն ու ծավալը, ինչպես նաև Ախուրյան գետին հարող սարահարթի ջրածածկելիության նախագծային մակարդակն ու կառուցման համակարգը, հարկ է նախատեսել սահմանապահ կոմիտարների իրավասության մեջ մտնող հատուկ միջոցառումներ (սահմանապահ նշանների տեղափոխում և այլն):

Մինչև ղեկտեմբերի 19-ը նստաշրջանն անցնում էր բնականոն, համաձայնեցված կերպով իրականացվում էին ծրագրավորված աշխատանքները, այլ խոսքով՝ մենք ամուսնում էինք այն, ինչ մտնում էր մեր պարտականությունների շրջանակի մեջ և լիովին համապատասխանում էր խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի իրավասությանը: Դեկտեմբերի 19-ին պատվիրակությունների ներկայացուցիչներ՝ ԽՍՀՄ դեսպան Պ.Կ. Երմոշինը և Թուրքիայի դեսպան Մուստաֆա Քենանօղլուն Համատեղ հանձնաժողովի նիստում փոխանակեցին սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին մամուլի հաղորդագրության նախագծերը: Այդ պահից խորհրդային պատվիրակությունը Մուստաֆա Քենանօղլուի միջոցով իրականացվող Թուրքիայի ԱԳՆ-ի գրեթե բացահայտ թելադրանքի պայմաններում, գնաց ԽՍՀՄ վերադաս մարմիններից և ոչ մեկի կողմից չթույլատրված խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի իրավասությունից դուրս գալու և խորհրդա-թուրքական հարաբերությունների՝ մեծ քաղաքականության ոլորտ ներխուժելու ուղիով:

Համաձայն 1967թ. փետրվարի 28-ին ԽՍՀՄ և Թուրքիայի կառավարությունների ստորագրած արձանագրության՝ խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը ձևավորվել էր միայն պետական սահմանի վերասահմանագծման տեխնիկական հարցերի լուծման համար:

Խորհրդային պատվիրակության աշխատանքը ղեկտեմբերի 19-ից 29-ը ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ նստաշրջանի վերջին փուլում, իրենից զգալի հետաքրքրություն է ներկայացնում, պահանջում է մանրակրկիտ վերլուծություն, այդ պատճառով պարտավոր են գզում դրա մասին զեկուցել մանրամասն, բառացի գրի առնված առանձին երկխոսությունների ներկայացմամբ:

Պետական սահմանի վերասահմանագծման առիթով մամուլի հաղորդագրության հարցը չկանխատեսված կերպով և անսպասելիորեն խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքում դարձավ գլխավորը: Կողմերը ներկայացրին իրենց նախագծերը. խորհրդայինը՝ նկատի ունենալով խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման համար կատարված տեխնիկական աշխատանքի մասին լակոնիկ հաղորդագրությունը, թուրքականը՝ հետապնդելով շահադիտական նպատակներ խորհրդա-թուրքական հարաբերություններում ընդհանրապես: Վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին մամուլի հաղորդագրության խորհրդային նախագիծը (տես Հավելված, թիվ 1) ամբողջությամբ համաձայնեցված էր ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության ղեկավարության հետ, հակիրճ էր և լիովին համապատասխանում էր խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի մակարդակին և նրա իրավասությանը: Իր բովանդակությամբ խորհրդային նախագիծը նշանակում էր կատարված աշխատանքի հաստատագրումը, ինչի մասին խոսվել էր իրենք իրենց փոխարեն ստորագրած կողմերի միջև: Մամուլի համար դա ավելի քան բավարար էր: Խորհրդային պատվիրակությունը և Թուրքիայում խորհրդային դեսպանատունը ունեին ծանրակշիռ դիվանագիտական, իրավաբանական և այլ փաստարկներ իրենց նախագծի վճռական պաշտպանության համար, բայց, ցավոք, դա չարեցին: Թուրքական նախագիծը (տես Հավելված, թիվ 2) նախաբանի «իրավաբանության» և ողջ տեքստի «շքեղ» բառակազմության մեջ հմտորեն թաքցրել էր թուրքերի համար ամենից կարևոր մի բառակապակցություն՝ «ԱՆՓՈՓՈՒՍ ՍԱՀՄԱՆ ԽՍՀՄ-ի ԵՎ ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ»<sup>13</sup>:

Ինչպես հայտնի է, թուրքական դիվանագիտությունը «Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև սահմանի անփոփոխելիության մասին» հռչակագիր է կորզում Թուրքիա խորհրդային յուրաքանչյուր այցելությունից: Դատելով նախագծի ոգուց՝ մենք պետք է չկասկածեինք, որ թուրքերը պատրաստ կլինեն նախաբանի մեջ որոշ ուղղումների գնալ, բայց դրանում վճռականորեն կպաշտպանեն իրենց համար ամենագլխավորը՝ «թուրք-խորհրդային սահմանի անփոփոխելիության մասին» նոր հռչակագիրը: Այդպես էլ, ցավոք սրտի, ստացվեց:

<sup>13</sup> Պարբերության դիմաց ծախս լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է: Բնագրում մեծատառերով է տպված: Այստեղ և զեկուցագրի այլ հատվածներում բերվող «Թուրքական հանրապետություն» հասկացությունը ոչ թե «Թուրքիայի Հանրապետություն» բառակապակցության պարզ աղավաղումն է, այլ ռուսերենում կիրառվող, ուստիև Գ. Նալբանդյանի կողմից օգտագործված Турецкая республика հասկացության բառացի թարգմանությունը:

Թուրքական նախագիծը, բնականաբար, զգաստացրեց ինձ, և ես դիմեցի պատվիրակության նախագահ Պ.Կ. Երմոչինին խնդրելով չսահմանափակվել մեր պատվիրակության անդամներին թուրքական նախագծին Համատեղ հանձնաժողովի նիստում ծանոթացնելով, այլ այսօր և եթ հատուկ քննարկել այն պատվիրակության խորհրդակցությունում:

Համատեղ հանձնաժողովի նիստն ավարտվեց կողմերի հայտարարությամբ այն մասին, որ նախագծերը ուսումնասիրվելու են, և պատասխանները կտրվեն դեկտեմբերի 20-ին: Դեկտեմբերի 19-ի ժամը 20-ին, պատվիրակության նախագահ Պ. Կ. Երմոչինի հյուրանոցային համարում, թուրքերի կողմից գաղտնալուծված բացառող համապատասխան միջոցներով կայացավ սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին Կոմյունիկեի թուրքական նախագծի քննարկումը:

**Երմոչինի Պ.Կ.-** Պատվիրակության անդամն առաջարկություն է ներկայացրել քննարկել թուրքական նախագիծը: Խնդրում եմ կարծիքներ հայտնել:

**Նալբանդյան Գ.Ա.-** Անիրաժեշտ է դրսևորել կոչո դիրքորոշում խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքի բնույթին և բովանդակությանն ամբողջությամբ համապատասխանող խորհրդային նախագծի պաշտպանության համար: Կատարված աշխատանքի փաստագրման մասով կարելի է միավորել խորհրդային և թուրքական նախագծերի փոխհավաստ ընդհանուր դրույթները: Ընկ. Գրոմիկոյի<sup>14</sup> մասին պարբերությունները և հատկապես տեքստի վերաբանումն առկա հռչակագիրը հարկավոր է անպայման հանել թուրքական նախագծից:

**Բեստունով Ա.Վ.-** Պետական սահմանի վերասահմանագծման խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը կատարել է միայն տեխնիկական բնույթ ունեցող աշխատանք, այդ պատճառով, իր մեջ ընդհանրապես խորհրդա-թուրքական հարաբերությունների մասին քաղաքական հռչակագիր պարունակող թուրքական նախագծի ընդունումը կլինի ապօրինի ակտ: Խորհրդային նախագիծը համաձայնեցված է ԽՍՀՄ ԱԳՍ-ի հետ, իրավաբանորեն հիմնավորված է և պետք է որպես հիմք ընդունվի:

**Գիգինեյվիլի Օ.Ի.-** Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը կատարել է տեխնիկական աշխատանք:

Խորհրդակցությունն ավարտվեց որպես հիմք խորհրդային նախագծի ընդունմանը հասնելու, թուրքական նախագծից «Կոմյունիկեի» խորագիրը, Թուրքիա ընկ. Գրոմիկոյի այցին<sup>15</sup> վերաբերող նախաբանը և խորհրդա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ քաղաքական հայտարարագիրը հանելու մասին պատվիրակության որոշմամբ: Պատվիրակության խորհրդակցությունից հետո՝ դեկտեմբերի 19-ի ժամը 23-ին, ես, առանձնացած, զրույց ունեցա խորհրդային պատվիրակության նախագահ, ԽՍՀՄ դեսպան ընկ. Պ.Կ. Երմոչինի հետ:

**Նալբանդյան Գ.Ա.-** Պավել Կոնստանտինի, Ձեզ գիտեմ որպես Հայկական հարցը լավ իմացող և Կիպրոսից հայերի հայրենադարձության մեջ մեծ վաստակ ունեցող փորձառու դիվանագետի, որտեղ Դուք եղել եք ԽՍՀՄ դեսպանորդը, ուստի ցանկանում եմ թուրքական նախագծի շուրջ Ձեզ հետ անվեղծորեն զրույցել: Թուրքերը մտադիր են իրենց ձեռքը զցել հայկական հողերի նվաճումն իրենց օգտին անընդհատոր մոր քաղաքական փաստաթուղթ: Թուրքական նախագծի ողջ հռչակագրային մասը ստորագրված է այդ նպատակին: Ես տվյալներ ունեմ, որ Մուստաֆա Քենանօղլուն ունի «խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության» մասին նախադասությունը խցկելու վերաբերյալ կառավարության և Արտաքին գործերի նախարարության կոչո հրահանգը, համառելու է այդ հարցում, ուստի խնդրում եմ Ձեզ անդրդվելիություն ցուցաբերել մեր նախագծի պաշտպանության հարցում, առավել ևս, որ թուրքականի նկատմամբ այն ունի անվիճելի դիվանագիտական և իրավաբանական առավելություն: Իմ ասածի հետ կապված խնդրում եմ ընդունել հետևյալ պաշտոնական, բանավոր հայտարարությունս. «Ես կտրականապես

<sup>14</sup> Գրոմիկո Անդրեյ Անդրեյի (1909-1989) – խորհրդային հայտնի դիվանագետ: 1939թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԱԳՍ-ում, 1957-1985թթ. եղել է արտաքին գործերի նախարար, 1985-1989թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ:

<sup>15</sup> Ա. Գրոմիկոյի այցը Անկարա կայացել է 1965թ. մայիսի 17-22-ը, ինչի արդյունքում ընդունված խորհրդա-թուրքական Կոմյունիկեում մասնավորապես նշվում էր. «Երկու կողմերը իրենց հարաբերությունները կկառուցեն անկախության, տարածքային ամբողջականության, իրավահավասարության հարգման և միմյանց ներքին գործերին չխառնվելու սկզբունքների հիման վրա»: Տե՛ս «Պրավդա», 1965, մայիսի 23: Իսկ 1965թ. օգոստոսի 9-16-ին Թուրքիայի վարչապետ Սուաթ Հայրի Ուրադուփյուի ԽՍՀՄ պատասխան այցի առթիվ ընդունված Կոմյունիկեում կրկին նշվում էր. «Երկու կողմերը գոհունակությամբ նշում են, որ հավատարիմ մնալով անկախության, տարածքային ամբողջականության, իրավահավասարության, փոխադարձ հարգանքի սկզբունքներին, անվեղծ ցանկանում են միմյանց միջև զարգացնել բարիդրացիական հարաբերություններ»: Տե՛ս «Պրավդա», 1965, օգոստոսի 17: Դրանց հաջորդել են ԽՍՀՄ կառավարության նախագահ Ա. Կոսիգինի այցը Թուրքիա 1966թ. դեկտեմբերի վերջին և Թուրքիայի վարչապետ Ա. Դեմիրելի այցը ԽՍՀՄ 1967թ. սեպտեմբերի վերջին

առարկում են մամուլի հաղորդագրության թուրքական նախագծի վերջաբանի՝ խորհրդա-թուրքական պետական սահմանի անփոփոխելիության մասի դեմ, համարում են այն բացարձակապես անընդունելի՝ ոչ խՍՀՄ-ի համար ընդհանրապես, ոչ էլ, առավել ևս, Հայկական խՍՀ-ի համար՝ մասնավորապես: Եթե այդ հարցում խորհրդային պատվիրակության կողմից հնարավոր են ինչ-ինչ տատանումներ, նախօրոք խնդրում են թույլատրել ինձ անմիջապես մեկնել խՍՀՄ՝ խՍՀՄ Արտաքին գործերի նախարարությանը և Հայկական խՍՀ ղեկավարությանը համապատասխան զեկույցի համար:

**Թրմոչին Պ.Կ.-** Թուրքերի հիմնական նպատակը պարզ է նաև ինձ: Իհարկե, թուրքերը ձգտում են այժմ գոյություն ունեցող թուրք-խորհրդային պետական սահմանը երաշխավորող նոր քաղաքական փաստաթղթի, սակայն դա կատարվում է հանգամանքների բերումով: Վերջին ժամանակներս մեր կառավարությունը հաստատված տարածքային սահմանների անփոփոխելիության ապահովման մասին բազմաթիվ հայտարարություններ է արել: Պետք է հասնենք Համատեղ հանձնաժողովի կողմից որպես հիմք՝ մեր նախագծի ընդունմանը, սակայն այդ գործում սպասվում են մեծ դժվարություններ: Թուրքական նախագծից պետական սահմանի անփոփոխելիության մասին ձևակերպումը հանելն ամենից դժվարն է լինելու: Դա կարող է տազնապ առաջացնել թուրքերի մոտ և հակառակի մասին տպավորություն ստեղծել: Ի միջի այլոց, թուրքերն ամբողջ ժամանակ ակնարկում են այն մասին, որ պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին Կոմյունիկեն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի անվտանգության, տարածքների անձեռնմխելիության և սահմանների անփոփոխելիության երաշխիքների մասին թուրքական հասարակայնության ակնկալիքներին: Դա թուրքերի համար կունենա շատ կարևոր նշանակություն, հատկապես նոր կառավարությամբ՝ ձևավորման առաջիկա կամպանիան հաշվի առնելով:

**Նալբանդյան Գ.Ս.-** Թույլ են տալիս ինձ Ձեր ասածի վերաբերյալ որոշ դիտողություններ անել: Կոմյունիկեի թուրքական նախագծի մեջ «թուրք-խորհրդային սահմանի անփոփոխելիության մասին» նախադասությունը ներառված է ոչ պատահականորեն ու հանգամանքների բերումով: Թուրքերը լուծում են հայկական հողերի զավթումը՝ մեր կողմից կրկին ճանաչելու իրենց ծայրահեղորեն հետաքրքրող կոնկրետ հարցը: Ինչպես հայտնի է, թուրքերը լուծել և լուծում են բազմաթիվ, այդ թվում՝ սահմանային հարցեր, նաև իրենց այլ հարևանների հետ, սակայն նրանցից «սահմանների անփոփոխելիության» երաշխիքների մասին պարբերական հավաստիացումներ չեն պահանջել և չեն ստացել: Եթե անցնի թուրքական նախագիծը, հետևաբար թուրքերը, ըստ իրենց մտահղացման, կստանան ավելի ուժեղ և ծանրակշիռ փաստաթուղթ, քան Կարսի և Մոսկվայի 1921թ. պայմանագրերը<sup>17</sup>, և այն պայմանագիրը, որը 1921թ. փետրվարին Մոսկվայից ՌՍՖՍՀ Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի<sup>18</sup> և Ազգությունների գծով ժողկոմ Ի. Ստալինի հետ բանակցություններից հետո իր հետ տարավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ բեյը: Այս անգամ զավթված հայկական հողերը թուրքերի օգտին ամրագրող նոր փաստաթղթի ծանրակշռությունը կպայմանավորվի այդ փաստաթղթի ընդունման մեջ Հայկական խՍՀ մասնակցությամբ՝ ի դեմս

<sup>16</sup> 1960-ական թվականներից Թուրքիան ձգտելով փոխշահավետորեն կարգավորել ԱՄՆ-ի ու Հյուսիսատլանտյան դաշինքի հետ իր հարաբերությունները՝ սիրախաղ սկսեց խՍՀՄ-ի հետ և դրանով իսկ փորձեց շանտաժի ենթարկել իր արևմտյան դաշնակիցներին: Մյուս կողմից, խիստ լարվել էր նաև Թուրքիայի ներքին իրավիճակը: 1971թ. մարտին գինվորականների պահանջով Ս. Դեմիրելի կառավարությունը հրաժարական տվեց, վարչապետ դարձավ Լ. Երինը, սակայն խորհրդարանի աշխատանքը փաստորեն կազմալուծված էր: Ներքաղաքական ճգնաժամը սրվեց 1973թ. գարնանը, երբ Ջևդեթ Սունայի նախագահական ժամկետի լրանալուց հետո, քվեարկության 14 փուլերի արդյունքում, 1973թ. ապրիլին Թուրքիայի նախագահ ընտրվեց Ֆահրի Քոռաթյուրը: 1973թ. աշնանը իրադրությունը փոքր ինչ կայունացավ, ինչը թույլ տվեց խորհրդարանական ընտրություններ անցկացնել, որոնցում ոչ բացարձակ առավելությամբ հաղթեց Բյուլենթ Եջևիթի ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, որը չէր այսպես 1974թ. հունվարին կազմված կոալիցիային, այնուամենայնիվ, 1974թ. սեպտեմբերին հրաժարական տվեց, ինչին հետևեց ճգնաժամի հետագա խորացումը մանավանդ Կիպրոսյան հիմնախնդրի համապատկերում:

<sup>17</sup> խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայի պայմանագիրը կնքվել է 1921թ. մարտի 16-ին, Գ. Չիչերինի և Յուսուֆ Քեմալի կողմից: Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն այն վավերացրել է 1921թ. հուլիսի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը՝ 1921թ. հուլիսի 31-ին, վավերացման վկայագրերը փոխանակվել են Կարսում 1921թ. սեպտեմբերի 22-ին: Բաղկացած էր 16 հոդվածից և 3 Հավելվածից: Խորհրդային Ռուսաստանը Թուրքիայի սահմաններ ճանաչեց քեմալական Ազգային ուխտով նախանշված տարածքները: Հայկական խՍՀ-ի, Արբերջանական խՍՀ-ի, Կրասնական խՍՀ-ի ու Թուրքիայի միջև Կարսի պայմանագիրը կնքվել է 1921թ. հոկտեմբերի 13-ին՝ խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ և ուժի մեջ է մտել 1922թ. սեպտեմբերի 11-ին: Պայմանագրի գործողության ժամկետ նախանշված չէր: Սրանով անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների վրա տարածվեցին Մոսկվայի պայմանագրի դրույթները: Բաղկացած էր 20 հոդվածից և 4 Հավելվածից:

<sup>18</sup> Չիչերին Գեորգի Վասիլի (1872-1936) – խորհրդային հայտնի դիվանագետ: 1918թ. կնքել է Բրեստի և 1921թ. Մոսկվայի պայմանագրերը, 1918-1930թթ. եղել է ՌՍՖՍՀ, ապա՝ խՍՀՄ արտաքին գործերի նախարար:

նրա ներկայացուցիչ: Բայց խնդրում են հաշվի առնել, որ Հայկական ԽՍՀ ներկայացուցիչն այդպիսի փաստաթղթի ընդունմանը չի մասնակցելու: Թուրքական տարբերակով՝ Կոմյունիկեի համար էական նշանակություն կունենա փաստաթղթերի ստորագրման հանդիսությանը կողմերի գերատեսչությունների բարձր ներկայացուցիչների մասնակցության հեղինակավոր լինելը: Խորհրդային կառավարության հայտարարությունը սահմանների անձեռնմխելիության մասին, ինչպես ես եմ հասկանում, նկատի ունի պետություններին օրինականորեն պատկանող տարածքները: Մասնավորապես, այդպիսի հայտարարություններ են արվել այժմ սոցիալիստական համագործակցության մեջ մտնող որոշ արևմտաեվրոպական<sup>19</sup> պետությունների հետպատերազմյան կարգավորման և սահմանների վերաբերյալ: Ի միջի այլոց, սա են, որ Արևմուտքում<sup>20</sup> հաջողությամբ և մի բան էլ ավելի լուծված են այն բոլոր տարածքային խնդիրները, որոնցում շահագրգռված էր մեր Միությունը: Դա չի կարելի ասել հարավային սահմանի մասին: Դուք մտավախություն ունեք, որ թուրքական նախագծից քաղաքական մասը հանելու մեր փորձերը կզգաստացնեն թուրքերին: Թուրքերը գերազանց գիտեն ինչ են անում: Զգաստանալը մեզ է անհրաժեշտ:

Ստածելով հասարակայնության, ավելի ճիշտ՝ Թուրքիայի տիրապետող և իշխող հանցախմբի շահերի մասին, մենք չենք կարող մոռանալ հայերի օրինական շահերի մասին: Ինչ-որ դիվանագիտական վրիպում այդ հարցում կարող է ողջ աշխարհում հայ հասարակայնության բացասական հակազդեցությունն առաջացնել:

Թուրքական նախագծում առկա և ընդհանրապես՝ Կոմյունիկեի համար անպետք, խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության մասին քաղաքական հռչակագրի հարցը հարկավոր է ուսումնասիրել այն նշանակության մակարդակով, ինչը թուրքերը դրան հատկացնում են: Խորհրդա-թուրքական պետական սահմանի ճակատագիրը հայ ժողովրդի հետ ուղղակի, անմիջական առնչություն ունի: Հայկական հողերի տասնինը-քսաներորդ մասը նվաճված է թուրքերի կողմից: Հայկական ԽՍՀ հասարակայնությունը, ողջ հողագնդի վրա աստանդական հայերի բազմաթիվ գաղթօջախները հավանություն են տալիս և աջակցում են մեր երկրի արտաքին քաղաքականությանը՝ քանի դեռ հաշտվում են իրենց ողբերգության հետ և ծայր չեն բարձրացնում արդարության վերականգնման համար, սակայն միևնույն ժամանակ նրանք պահանջում են, որպեսզի չփոփոխեն իրենց վերքերը և չվիրավորեն իրենց ազգային զգացմունքները: Հաշվի առեք. **հայկական հողերի զավթման ճանաչումը նշանակում է և ցեղասպանության ճանաչում, քանզի չի եղել Հայոց ցեղասպանություն առանց թուրքերի կողմից հայկական հողերի զավթման և չի եղել հողերի զավթում՝ առանց ցեղասպանության** (ընդգծումը մերն է՝ Ա. Գ.): Ժամանակը չէ՞ արդյոք դադարեցնել զոհե՞լ պաշտոնական հռչակագրերը, որոնք փաստորեն ճանաչում են թուրքերի կողմից հայկական հողերի զավթումը: Եւս մի քանի խոսք Թուրքիայի հասարակայնության մասին: Այն բանի համար, որպեսզի հանգստացնեն իրենց հասարակայնությանը և ազատեն նրան անհանգստությունից, թուրքական կառավարող շրջանակները կարող են հաջողությամբ օգտագործել ԽՍՀՄ խաղաղասիրական քաղաքականության մասին ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի<sup>21</sup> բազմաթիվ հայտարարագրերը: Ոչ միայն Խորհրդային Միության ժողովուրդների, այլև աշխարհի ողջ առաջադեմ մարդկության կողմից հավանության և աջակցության արժանացած ընկեր Բրեժնևի հայտարարագրերը իրենց պատվավոր տեղն են գտել բոլոր պետությունների մամուլի էջերում՝ բացի Թուրքիան և Չինաստանը: Թուրքական մամուլը, դա Ձեզ լավ հայտնի է, թշնամական տոն է որդեգրել ԽՍՀՄ-ի նկատմամբ, հերյուրանքներ է տարածում խորհրդային իրականության մասին, տպագրում է զանազան հորինվածքներ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի հասցեին և փորձում է վարկաբեկել ԽՍՀՄ Կենտկոմի արտաքին քաղաքականությունը: Համատեղ հանձնաժողովի ստատալիցանում մեր նախագծի քննարկման ժամանակ մեր փաստարկումներում ընկեր Լ. Ի. Բրեժնևի հայտարարագրերը պարտավոր ենք օգտագործել նաև մենք: Հարկավոր է ստիպել թուրքերին՝ համաձայնելու այն բանի հետ, որ ԽՍՀՄ Կենտկոմի Գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի բազմաթիվ հայտարարագրերից հետո խորհրդային պատվիրակությունն անիրավաչափ, անհարկի և նույնիսկ էթիկայի առումով ոչ ճիշտ է համարում տեխնիկական իրավասություն ունեցող հանձնաժողովի կողմից սահմանի անվտանգության, տարածքային ամբողջականության և այլնի վերաբերյալ քաղաքական բնույթի հռչակագրի ընդունումը:

<sup>19</sup> Բնագրում նշված է այդպես: Հավանաբար, պետք է լինի՝ արևելաեվրոպական:

<sup>20</sup> Այստեղ թերևս նկատի ունի Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում սրբազնված՝ ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանագիծը և լեհ-գերմանական սահմանները:

<sup>21</sup> Բրեժնև Լեոնիդ Իլյայի (1906-1982) – Խորհրդային կուսակցական և պետական հայտնի գործիչ: 1964-1982թթ. եղել է ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար, 1960-1964, 1977-1982թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ:

Դեկտեմբերի 20-ին, ժամը 9 անց 30 րոպեին, Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը սկսեց պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին Կոմյունիկեի նախագծերի քննարկումը: Պարզվեց, որ դեկտեմբերի 19-ի երեկոյան Մուսատաֆա Քենանօղլուն ստացել է ճշգրիտ տեղեկատվություն այդ օրը տեղի ունեցած խորհրդային պատվիրակության խորհրդակցության մասին<sup>22</sup>:

Գիշերվա ընթացքում շտապ կարգով կազմվել էր առաջին նախագծից շատ քիչ և ոչ էականորեն տարբերվող թուրքական երկրորդ նախագիծը (տե՛ս Հավելված, թիվ 3): Թուրքական ողջ պատվիրակությունը նիստի դուրս եկավ լարված-զրագրգիռ վիճակում: Խորհրդային պատվիրակության նախագահ Պ. Կ. Երմոշինը առաջարկեց իբրև հիմք ընդունել սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին Կոմյունիկեի խորհրդային նախագիծը՝ որպես Խորհրդա-թուրքական հանձնաժողովի իրավասությանն առավել համապատասխանող, և նրա մեջ ինչ-որ բան ներառել թուրքական նախագծից:

Մուսատաֆա Քենանօղլուն վճռական կերպով հայտարարեց. «Պարոն դեսպան, վերասահմանագծման փաստաթղթերը ստորագրվում են Անկարայում, ուստի համապատասխան միջազգային դիվանագիտական ավանդույթներին և նորմերին, պետք է որպես հիմք ընդունվի Կոմյունիկեի թուրքական նախագիծը: Հավչի առնելով Ձեր առարկությունները մեր առաջին նախագծի ընդարձակության դեմ, մենք առաջարկում ենք Ձեզ իր բովանդակությամբ ավելի կարճ Կոմյունիկեի երկրորդ նախագիծ»:<sup>23</sup> Մեր կանխատեսումը հաստատվեց. թուրքական պատվիրակությունն անցավ խորհրդային պատվիրակության վրա ճնշման: Կողմերը պարտավորվեցին կրկին ուսումնասիրել և փոխանակել առաջարկություններ: 1973թ. դեկտեմբերի 20-ին՝ ժամը 20-ին, խորհրդային պատվիրակության նախագահ Պ. Կ. Երմոշինի համարում տեղի ունեցավ թուրքերի երկրորդ նախագծի քննարկմանը նվիրված՝ պատվիրակության խորհրդակցությունը: Պ.Կ.Երմոշինը խնդրեց պատվիրակության անդամներին արտահայտել իրենց կարծիքներն ու առաջարկությունները:

**Նալբանդյան Գ.Ս.-** Թուրքերի առաջին և այսպես կոչված՝ երկրորդ նախագծերը նույնական են, չեն համապատասխանում Խորհրդա-թուրքական հանձնաժողովի իրավասությանը և իրենց հռչակագրային մասում մտնելով կառավարությունների իրավասության մեջ, որոշում են խորհրդա-թուրքական հարաբերությունների սկզբունքները: Թուրքերի նախագծերը չեն կարող ընդունվել նույնիսկ որպես հիմք:

**Երմոշին Պ.Կ.-** Կոմկրես ձևակերպեք Ձեր առաջարկությունը, քանի որ թուրքական նախագիծը՝ մեր<sup>24</sup> առաջարկություններով, Թուրքիայում խորհրդային դեսպանության միջոցով մենք պետք է ներկայացնենք Միության Արտաքին գործերի նախարարությանը:

**Նալբանդյան Գ.Ս.-** Որպես հիմք ընդունել խորհրդային նախագիծը, թուրքական նախագծերից հանել քաղաքական հռչակագիրը, հատկապես խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության մասին արտահայտությունը: Իմ առաջարկը պարտադիր կերպով հայտնել դեսպանությանը և ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությանը: Միաժամանակ, հաղորդել Մոսկվայում գտնվող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ ընկեր Ն. Խ. Հարությունյանի, և ապա՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և հանրապետության Նախարարների խորհրդի ղեկավարության հետ այդ հարցի հետ կապված խորհրդակցելու վերաբերյալ իմ խնդրանքը:

**Երմոշին Պ.Կ.-** (Վրացական ԽՍՀ ներկայացուցիչ Օ. Ի. Գիգինեշվիլուն) Դուք կարո՞ղ եք միանալ Նալբանդյանի առաջարկությանը:

**Գիգինեշվիլի Օ. Ի.-** Ոչ<sup>24</sup>:

**Բեստումով Ա.Վ.-** Երկու թուրքական նախագծերն էլ ունեն միևնույն բովանդակությունը: Մենք կատարել ենք տեխնիկական աշխատանք, դրա համար էլ սահմանի վերասահմանագծման աշխատանքներն ավարտելու մասին մամուլի հաղորդագրությունը, եթե այն ընդհանրապես հարկավոր է, պետք է լինի միայն խորհրդային նախագծի ոգով: Մենք իրավասու չենք ընդունել խորհրդա-թուրքական հարաբերությունների մասին քաղաքական հռչակագիր, և դա չի մտնում խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի իրավասության մեջ: Պատվիրակության կարծիքը հարկավոր է հաղորդել դեսպանությանը և Միության ԱԳՆ-ին:

Խորհրդակցությունը որոշեց. թուրքական նախագիծը ներկայացնել Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանության և ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության քննարկմանը, միաժամանակ հաղորդել նրանց Նալբանդյանի առաջարկության և խնդրանքի մասին: Դեկտեմբերի 21-ին, գրեթե ողջ օրը, Պ. Կ. Երմոշինը

<sup>22</sup> Նշված բառերի տակ և ձախ լուսանցքում Ա. Քոչինյանը կրկնակի ընդգծել է:

<sup>23</sup> Նկատի ունի՝ խորհրդային:

<sup>24</sup> Պարբերության դիմաց՝ ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը կրկնակի ընդգծել է:

ինը և Պ. Ս. Իվանովը գտնվում էին Խորհրդային դեսպանատանը: Դեկտեմբերի 21-ին՝ ժամը 15-ին, ես մեկնեցի Խորհրդային դեսպանատուն և աշխատակիցներից մեկի հետ զրույցում իմացա, որ Վ. Ֆ. Գրուբյակովը (դեսպան) հրաժարվում է Նալբանդյանի առաջարկությունը և խնդրանքը հաղորդել Մոսկվա: Երեք ժամ ուշ այդ մասին հաղորդեց ինձ նաև Խորհրդային պատվիրակության նախագահի տեղակալ գեներալ Պ. Ս. Իվանովը: Վերջինիս հաղորդումից պարզ դարձավ, որ թուրքիայում Խորհրդային դեսպան Վասիլի Ֆյոդորի Գրուբյակովը հավանություն է տալիս պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին մամուլի լիամար նախատեսված իրադրագրության թուրքական նախագծին, համարում է այն «չքեղ» և միանգամայն ընդունելի:

Դեկտեմբերի 21-ին՝ ժամը 21-ին, Պ. Կ. Երմոշինը իր մոտ՝ «Բուլվար փակաս» հյուրանոցում, հրավիրեց պատվիրակության նեղ կազմով Խորհրդակցություն: Ներկա էին Պ. Ս. Իվանովը, Ա. Վ. Բեսսոնովը, Գ. Ս. Նալբանդյանը:

**Երմոշին Պ.Կ.-** *Թուրքերը շատ են համառուն, ոչ մի փոխգիշման չեն գնում, պահանջում են որպես հիմք ընդունել իրենց նախագիծը և պարտադիր կերպով նրանում տալ «սահմանների անվտանգության, տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության» երաշխիքների մասին պարբերությունը: Ի՞նչ անել:*

**Նալբանդյան Գ.Ս.-** *Թուրքերի բուք<sup>25</sup> և անբովանդակ համառությանը հարկավոր է հակադրել Խորհրդային պատվիրակության գիտակցված, հիմնավորված համառությունը, ստիպել նրանց հասկանալու, թեպետ դա նրանք հիանալի են հասկանում, որ մենք բարեկամության և չհարձակման մասին պայմանագիր կնքելու կառավարական պատվիրակություն չենք: Թուրքերի տրամաբանությամբ ստացվում է, որ Խորհրդա-թուրքական սահմանի տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության մասին հռչակագիր պետք է տա նաև ԽՍՀՄ ԴՃՆ<sup>26</sup> պատվիրակությունը, որը թուրքիա է ժամանել զուտ տեխնիկական հարցերով և ներկայումս գտնվում է Անկարայում՝ մեզ հետ նույն հյուրանոցում: Վերջապես, որպեսզի դադարեցվի թուրքերի հետ բանավեճը Կոմյունիկեի հարցով, Խորհրդակցեք Խորհրդային դեսպանատանը և թուրքերին առաջարկեցեք ամենից լավ տարբերակը. թող յուրաքանչյուր կողմ ինքը տա, ըստ իր հայեցողության, իր մամուլի հաղորդագրությունը՝ սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին:*

**Բեսսոնով Ա.Վ.-** *Ես մնում եմ իմ կարծիքին և գտնում եմ, որ եթե նույնիսկ մամուլին պետք է հաղորդագրություն տալ, ապա դա հարկավոր է անել մեղ պլանով և միայն կատարված աշխատանքի հաստատագրումով, առանց Խորհրդա-թուրքական հարաբերությունների մասին հռչակագրի:*

**Երմոշին Պ.Կ., Իվանով Պ.Ս.-** *Վասիլի Ֆյոդորովիչը (Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Գրուբյակով<sup>27</sup>) Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման աշխատանքներն ավարտելու մասին Կոմյունիկեի համարում է պարտադիր և այն առաջարկում է ընկեր Պողոզորու<sup>28</sup> Թուրքիա 1972թ. այցի ժամանակվա Դռնակագրի հիման վրա<sup>29</sup>: Ահա Դռնակագրի և երկու նախագծերի՝ Խորհրդայինի ու թուրքականի տեքստը, պետք է կազմել Կոմյունիկեի փոխադարձ ընդունելի նախագիծ:*

**Նալբանդյան Գ.Ս.-** *«Խորհրդա-թուրքական սահմանի տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության» մասին արտահայտությունը մնու՞մ է:*

**Երմոշին Պ. Կ.-** *Այո: Թուրքերի համար դա գլխավորն է:*

<sup>25</sup> Ռուսերենով հենց այդպես էլ գրված է тупой (բութ, բթամիտ):

<sup>26</sup> Հաղորդակցության ճանապարհների նախարարություն:

<sup>27</sup> Գրուբյակով Վ. Ֆ. – ծնվել է 1911թ.: 1943թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԱԳՆ-ում, 1945-1947թթ. եղել է Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսը, 1967-1969թթ.՝ ԽՍՀՄ դեսպան Բելգիայում, 1969-1974թթ.՝ դեսպան Թուրքիայում:

<sup>28</sup> Պողոզորի Նիկոլայ Վիկտորի (1903-1983) – Խորհրդային պետական գործիչ: 1957-1963թթ. եղել է Ուկրաինայի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար, 1964-1965թթ.՝ ԽՍՀՄ Կենտրոնի երկրորդ քարտուղար, 1965-1977թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ:

<sup>29</sup> 1972թ. ապրիլի 17-ին Անկարայում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Ն. Պողոզորին և Թուրքական հանրապետության նախագահ Ջևդեթ Սուևայը ընդունեցին «ԽՍՀՄ և Թուրքական հանրապետության միջև բարիդրացիական հարաբերությունների սկզբունքների մասին Դռնակագիր»: Այդտեղ, ի թիվս այլոց, նշվում էր, որ երկու երկրները իրենց երկկողմանի ու միջազգային հարաբերություններում պետք է ղեկավարվեն հետևյալ սկզբունքներով. «3. Պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության հարգում»: Տեքստը տես ԴԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, թթ. 81-82: «Պրավդա», 1972, ապրիլի 18: Ի դեպ, Խորհրդային պաշտոնական դիվանագիտական պատմության մեջ այս Դռնակագրին կարևոր նշանակություն էր տրվում: Տես «Սոցիալիզմի դիվանագիտությունը», առաջաբան՝ Ա. Ա. Գրոմիկոյի, Մոսկվա, 1973, էջ 255: Ուշագրավ է այն փաստը, որ 1975թ. դեկտեմբերի 26-29-ին ԽՍՀՄ կառավարության նախագահ Ա. Կոսիգինի Թուրքիա այցի արդյունքում ընդունված Կոմյունիկեում նույնպես շեշտվում էր նշյալ Դռնակագրի կարևորությունը. «Պրավդա», 1975, դեկտեմբեր:

**Նախաճառի 4. Ա.-** Օգտվելով անձամբ ինձ ընկեր Կոսիզիցի<sup>30</sup> ստորագրությամբ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշմամբ տրված իրավունքներից, վճռական կերպով առարկում եմ Թուրքիայում խորհրդային դեսպան Գրուբյակովի առաջարկության դեմ և պահանջում եմ այդ հարցի շուրջ իմ առաջարկության և խնդրանքի մասին, այնուամենայնիվ, հաղորդել ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությանը: Մենք հիմքեր չունենք կրկնօրինակել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ ընկեր Պողոթյանու Յուզակազիրը:

**Երմուշի 4.Ա.-** Հասկացե՞ք, ընկերներ, թուրքերը կպել են դրան և համառորեն պահանջում են, հարկավոր է շուտափույթ կերպով վերջացնել: Ախր այդտեղ ոչ մի հատուկ բան չկա, առավել և ս, որ այդ ամենն ասված է Պողոթյանու Յուզակազրում: Կոմյունիկեն տալիս ենք մեր կողմից և դա ընկեր Պողոթյանու Յուզակազրի կրկնօրինակում չի լինի:

**Նախաճառի 4. Ա.-** Եթե տալիս ենք մեր կողմից, եկեք ներառենք միջազգային դիվանագիտական հարաբերությունների գործընթացում կիրառվող երկու ամենը և արդարացի բառեր արտահայտության այսպիսի ձևակերպմամբ. «սահմանի անվտանգության և օրինականորեն պատկանող տարածքների անձեռնմխելիության»:

**Երմուշի 4. Ա.-** Թուրքերը երբեք չեն համաձայնի:

**Նախաճառի 4. Ա.-** Իսկ ինչու՞ չեն համաձայնի, և կոնկրետ ինչո՞վ կարող են հիմնավորել իրենց առարկությունները: Կոմյունիկեի հռչակագրային մասի այդ տարբերակը դրեք խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի քննարկմանը, թող թուրքերը պատասխան տան և հիմնավորեն իրենց առարկությունները:

Խորհրդակցությունից մեկ ժամ անց Պ. 4. Երմուշինը և Պ. Ա. Իվանովը ինձ իրենց մոտ գրույցի հրավիրեցին: Տեղի ունեցավ այսպիսի գրույց:

**Երմուշի 4.Ա.-** Այդ հարցի շուրջ Դուք հանրապետության<sup>31</sup> ղեկավարության որևէ ղեկավար ցուցում ունե՞ք:

**Նախաճառի 4. Ա.-** Առաջին, Հայկական ԽՍՀ ղեկավարությունը չէր կարող կանխատեսել խորհրդա-թուրքական հանձնաժողովի շեղումը՝ 1967թ. փետրվարի 28-ի խորհրդա-թուրքական Արձանագրությամբ որոշված իր գործառույթներից, որպեսզի իր ներկայացուցչին ինչ-որ ղեկավար ցուցում տար: Սակայն համոզված եմ, որ նույնիսկ եթե, ինչպես ես մի քանի անգամ խնդրել եմ, ԽՍՀՄ ԱԳՆ-ն օգտակար կհամարի խորհրդակցել հանրապետության ղեկավարության հետ, ապա նրա կողմից կլինի վերահսկման ազդեցություն մակարտելու մասին մասնուկի հաղորդագրության խորհրդային նախագծի լրիվ հավանությունը: Երկրորդ և ամենագլխավորը՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, Նախարարների Խորհուրդը և Արտաքին Գործերի նախարարությունը խորհրդա-թուրքական պետական սահմանի վերահսկման ազդեցման միջոցառումների ողջ համալիրը դիտարկել են միայն երկրի<sup>32</sup> շահերի տեսանկյունից, և ոչ թե հանրապետության նեղ ազգային շահերի շրջանակներում, խորհրդային պատվիրակությանը լիարժեք վստահություն և աջակցություն են ցուցաբերել, նրան բազմակողմանի օգնություն տրամադրելուն շատ մեծ ուշադրություն են դարձրել, իրենց նախաձեռնությամբ, ժամանակին, լուծել են հանրապետության տարածքում վերահսկման ազդեցման աշխատանքներին վերաբերող բոլոր հարցերը: Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ե. Քոչինյանը<sup>33</sup>, Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ ընկ. Ն. Խ. Հարությունյանը<sup>34</sup>, Նախարարների Խորհրդի նախագահներ ընկերներ Բ. Յ. Մուրադյանը<sup>35</sup> և Գ. Ա. Արզումանյանը<sup>36</sup>, Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ ընկ. Գ. Թ. Հարությունյանը<sup>37</sup>, Հայաստա-

<sup>30</sup> Կոսիզիցի Ալեքսեյ Նիկոլայի (1904-1980) – խորհրդային պետական գործիչ: 1964-1980թթ. եղել է ԽՍՀՄ կառավարության նախագահ:

<sup>31</sup> Նկատի ունի ՀԽՍՀ-ն:

<sup>32</sup> Նկատի ունի ԽՍՀՄ-ը:

<sup>33</sup> Քոչինյան Անտոն Երվանդի (1913-1989) – խորհրդահայ կուսակցական և պետական անվանի գործիչ: 1952-1966թթ. եղել է Հայկական ԽՍՀ նախարարների Խորհրդի նախագահ, 1954-1958թթ. նաև: ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար, իսկ 1966-1974թթ.: ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:

<sup>34</sup> Հարությունյան Նազուր Խաչատուրի – խորհրդահայ պետական գործիչ, ակտեմնիկոս: 1963-1975թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ:

<sup>35</sup> Մուրադյան Բաղալ Համայակի – խորհրդահայ պետական գործիչ: 1966-1972թթ. եղել է ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ:

<sup>36</sup> Արզումանյան Գրիգոր Աղաթոնի – խորհրդահայ պետական գործիչ: 1972-1976թթ. եղել է ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ:

<sup>37</sup> Հարությունյան Գեղամ Թոնասի – խորհրդահայ պետական գործիչ: 1965-1975թթ. եղել է ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ:

նի Կոմկուսի Կենտկոմի բաժնի վարիչ ընկ. Լ. Պ. Մանասերյանը<sup>38</sup>, Արտաքին գործերի նախարարներ ընկերներ Բ. Գ. Մարտիրոսյանը<sup>39</sup> և Կ. Բ. Ուղումյանը<sup>40</sup>, ջրային տնտեսության նախարար ընկ. Գ. Ա. Բաղրամյանը<sup>41</sup>, Հայկական ԽՍՀ սահմանամերձ բոլոր շրջանների կուսակցական և խորհրդային մարմինները խորհրդային պատվիրակության հետ մշտական շփման մեջ էին, բազմիցս հատուկ ընդունելություններ են կազմակերպել, խորհրդակցել են կոնկրետ հարցերի լուծման առթիվ, օգնել են մեզ: Համարապետության ղեկավարության ցուցումներով Հայաստանում պատվիրակության համար կազմակերպվել են բազմաթիվ էքսկուրսիոն շրջայցեր: Հայաստանում խորհրդային պատվիրակության հետ բոլոր հանդիպումներում թուրքերի նկատմամբ որևէ անբարյացակամ վերաբերմունքի դրսևորման նույնիսկ ոչ մի ակնարկի դեպք չի եղել: Ընդհակառակն, ես բազմիցս խորհրդային պատվիրակության ղեկավարությանը փոխանցել են հանրապետության առանձին հասարակական կազմակերպությունների՝ Հայաստան այցելելու հրավերը թուրքական պատվիրակությանը: Աշխատավորների պատգամավորների Լենինականի քաղխորհրդի գործկոմի նախագահ ընկ. Ս. Խ. Մատնիշյանը, Ախուրյանի շրջանային խորհրդի գործկոմը խորհրդա-թուրքական համատեղ ամբողջ հանձնաժողովի համար կազմակերպել են շատ լավ ընդունելություն, հենց այդպիսի ընդունելություն հանձնաժողովին տրվեց Սովետական Կարա-կալայում: Թուրքերը տառացիորեն ցնցված էին Հայաստանում նման բարյացակամ վերաբերմունքից, չգիտեին ինչպես արտահայտեն իրենց շնորհակալությունը, չէն դադարում հիշել ընդունելությունը Հայաստանում և այդ նստաշրջանը: Ինչպես բոլորին հայտնի է, թուրքական պատվիրակության նախագահներ Շինասի Օյմանը և Քեփենեկը, բազմիցս հիշելով Հայկական ԽՍՀ-ում ընդունելությունները, հայտարարում էին. «Մենք հայկական հացի մեջ զգացինք իսկական անկեղծություն, համոզվեցինք այն բանում, որ հայերը հիշաչար չեն»:

Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահությունը մի քանի անգամ Ձեր մասնակցությամբ քննարկել է խորհրդային պատվիրակությանն օգնություն ցուցաբերելու հարցերը: Հանրապետության ղեկավարությունը խորհրդային պատվիրակության աշխատանքը բարձր է գնահատել և նրա ղեկավարներին պարգևատրել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Պատվոգրերով<sup>42</sup>, իսկ պատվիրակության բոլոր անդամներին՝ Նախարարների խորհրդի Պատվոգրերով, հանձնվել են նվերներ: Ահա այդպիսի ոգով են եղել խորհրդային պատվիրակությունում իրենց ներկայացուցչին հանրապետության վերադաս մարմինների ցուցումներն ու հանձնարարականները: Ոչ մի հատուկ ղեկավար ցուցում չէր կարող լինել: Եղել է հանրապետության ղեկավարության և Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բաժնի վարիչ Լ. Պ. Մանասերյանի մեկ լուրջ նախազգուշացում. խստորեն պահպանել խորհրդային պատվիրակության համար հաստատված պահվածքի նորմաները, անդամների գործառույթային պարտականությունները, և ոչ մի պարագայում չմտնել խորհրդա-թուրքական և հայ-թուրքական հարաբերությունների քաղաքական բնույթի հարցերի մեջ<sup>43</sup>:

**Երմոզին Պ.Կ., Իվանով Պ.Ս.-** Բացարձակապես ճիշտ է: Անձամբ մենք անսահման շնորհակալ ենք Հայկական ԽՍՀ ղեկավարությունից, կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպություններից՝

<sup>38</sup> Մանասերյան Լեւոն Պետրոսի - խորհրդային պետական գործիչ: 1961-1965թթ. եղել է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանատան 1-ին քարտուղար, 1967-1984թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի տեղեկատվության և արտասահմանյան կապերի բաժնի վարիչ, 1984-1989թթ.՝ Հայրենադարձների ընդունման և տեղավորման պետական կոմիտեի նախագահ:

<sup>39</sup> Մարտիրոսյան Բալաբեկ Գրիգորի - խորհրդային պետական գործիչ: 1958-1959, 1961-1972թթ. եղել է ՀԽՍՀ արտգործնախարար:

<sup>40</sup> Ուղումյան Կամո Բաբինի - խորհրդային պետական գործիչ: 1967-1972թթ. եղել է ՀԽՍՀ կուլտուրայի, 1972-175թթ.՝ արտգործնախարար, ապա՝ Նեպալում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան:

<sup>41</sup> Բաղրամյան Գրիգոր Ալեքսանդրի - խորհրդային պետական գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր: 1954-1965թթ. եղել է ՀԽՍՀ ջրային տնտեսության, 1965-1977թթ.՝ մելիորացիայի և ջրային տնտեսության նախարար:

<sup>42</sup> Սահմանապահներին պատվոգրերով պարգևատրելու օրինակներից (այդ ժամանակ Հայկական ԽՍՀ-ն որպես միակ պարզկատարման ձև ուներ Գերագույն խորհրդի Նախագահության պատվոգիրը) հիշատակենք մի քանիսը. 1967թ. դեկտեմբերի 13-ին, 1968թ. մայիսի 14-ին, 1969թ. մայիսի 23-ին (այդ թվում՝ Գ. Նալբանդյանին), 1974թ. մայիսի 16-ին Լենինականի սահմանապահ ջոկատը: Տես ՀՊԱ, ֆ. 1, գ. 47, գ. 43, ք. 27; գ. 48, գ. 26, ք. 121: 1968թ. հունվարի 9-ին ՀԿԿ Կենտկոմի քյուրոն իմունեց ՀԽՍՀ ղեկավարության Կարմիր դրոշ պատվի նշանը հանրապետության տարածքում տեղակայված լավագույն սահմանապահ զորամասին պարգևատրելու համար: Այսպես, 1968թ. մայիսի 14-ին նման դրոշ հանձնվեց 39-րդ սահմանապահ ջոկատին, 1969թ. մայիսի 23-ին՝ Արտաշատի սահմանապահ ջոկատին: Տես ՀՊԱ, ֆ. 1, գ. 48, գ. 26, ք. 145, գ. 49, գ. 24: ՀԽՍՀ ղեկավարությունը 1974թ. փետրվարի 5-ին Անդրկովկասյան սահմանապահ օկրուգը ներկայացրեց ԽՍՀՄ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրման: Տես ՀՊԱ, ֆ. 1, գ. 54, գ. 24, ք. 152:

<sup>43</sup> Այս հայտարարությունը ցույց է տալիս, որ հասկանալով պահի լրջությունը, բայց չցանկանալով նահանջել սեփական դիրքերից, Գուրգեն Նալբանդյանը ողջ պատասխանատվությունը վերցնում էր իր վրա՝ դրսևորելով մարդկային ազնվություն ու միաժամանակ քաղաքացիական համարձակություն:

ամենօրյա ուշադրության և օգնության համար, որը նրանք սահմանի վերասահմանագծման վերաբերյալ խորհրդային կառավարության հանձնարարության կատարման հարցում ցուցաբերել են խորհրդային պատվիրակությանը:

**Նալբանդյան Գ.Ս.-** Այժմ մեկ հարց ունեմ ձեզ: Արդյո՞ք ձեր մոտ առարկություններ կան խորհրդային պատվիրակության անդամների և հատկապես Յայկական ԽՍՀ ներկայացուցչի հանդեպ՝ այն մասով, որ գուցե, ցուցաբերվել է անբարյացակամ վերաբերմունք թուրքերի նկատմամբ, ազդեցիկ տրամադրություններ են արտահայտվել թուրքական հանրապետության նկատմամբ, և այդ ամենը զգաստացրել, ստիպել է նրանց անել որոշակի եզրահանգումներ և որպես նախազգուշական միջոց՝ կրկին ձգտել սահմանի անվտանգության երաշխիքների:

**Երմոշին Դ.Կ., Իվանով Դ.Ս.-** Ոչ, դա լիովին բացառվում է: Խորհրդային ողջ պատվիրակությունն իրեն պահել է վարվելակերպի հաստատված նորմերի շրջանակներում:

**Նալբանդյան Գ.Ս.-** Ուրեմն թուրքերը ոչ պատահաբար մամուլի հաղորդագրության իրենց նախագծի մեջ թաքցրին խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության և անձեռնմխելիության մասին արտահայտությունը և հաստատ որոշել են՝ ունենալով այդ առթիվ իրենց կառավարության հստակ ղեկավար ցուցումը, մեզնից ստանալ իրենց կողմից հայկական հողերի զավթման նոր ճանաչումը:

Խորհրդային պատվիրակության նախագահ, ԽՍՀՄ դեսպան Դ.Կ. Երմոշինը գիշերը մեկնեց Խորհրդային դեսպանատուն, որպեսզի նորից քննարկի Կոմյունիկեի ասպեկտի հարցը: Խոստացվեց, որ ինչպես որոշվել էր պատվիրակության խորհրդակցությունում, թուրքական նախագիծը՝ Յայկական ԽՍՀ ներկայացուցչի առաջարկությունով և խնդրանքով, փոխանցել ԽՍՀՄ ԱԳՆ-ի քննարկմանը, սակայն հետագայում պարզվեց, որ խոստումը չի իրականացվել: Վ.Ֆ. Գրուբյակովը և Դ.Կ. Երմոշինը որոշեցին այդ հարցի առիթով պատվիրակության անդամների հետ այլևս չխորհրդակցել: Այդ գործից մեկուսացվեց նաև Ա.Վ. Բեստոմովը: Թուրքերը ընթացք տվին բոլոր միջոցներին, որպեսզի հասնեն իրենց խմբագրմամբ Կոմյունիկեի: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Յայլուկ Բայուլբենը<sup>44</sup> Մուստաֆա Քենանօղլուի առջև վերջնագրային պահանջ դրեց. « ստիպել ռուսներին՝ ընդունելու թուրքական նախագիծը»: Ինչպես երևում է վերոշարադրյալից, սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին Կոմյունիկեի դարձավ ստատաշրջանի կենտրոնական հարցը: Դեկտեմբերի 22-ին և 23-ին Դ.Կ. Երմոշինը և Դ.Ս. Իվանովը մեծ մասամբ գտնվում էին Խորհրդային դեսպանատանը՝ Վ.Ֆ. Գրուբյակովի մոտ: Խորհրդային և թուրքական պատվիրակությունների անդամները պլանավորված կերպով զբաղվում էին վերասահմանագծման փաստաթղթերի ձևակերպմամբ: Այդ գործում ոչ մի բարդություն չէր առաջանում, քանզի բոլոր հարցերը կողմերի համապատասխան համաձայնագրերում մինչև վերասահմանագծման աշխատանքների սկիզբը, քննարկված և որոշված էին առավելագույն հստակությամբ: Պատվիրակությունների միջև վեճերը և լուրջ տարաձայնությունները ծագում և ժամանակին լուծվում էին դաշտային աշխատանքների ժամանակ, անմիջապես սահմանի գծի վրա, ինչի մասին հանրապետության վերադաս մարմիններին զեկուցվում էր նախապես: Կամերալ աշխատանքներն ընդհանուր առմամբ հարթ անցան:

Դեկտեմբերի 24-ին տեղի ունեցավ Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի նիստ: Տեխնիկական փաստաթղթերի մի մասի ստորագրումից առաջ պատվիրակությունների նախագահները հակիրճ քննարկեցին Կոմյունիկեի նախագծերի մասին հարցը:

**Մուստաֆա Քենանօղլու-** Պարոն դեսպան, Դուք քննարկե՞լ եք մեր երկրորդ նախագիծը և ե՞րբ մենք կունենանք այդ հարցի շուրջ Ձեր պատասխանը:

**Երմոշին Դ.Կ.-** Պարոն դեսպան, ուսումնասիրում ենք: Կարծում եմ, որ վաղը կամ հաջորդ օրը Ձեզ կտանք մեր պատասխանը և կպայմանավորվենք Կոմյունիկեի փոխադարձ ընդունելի տարբերակի մասին:

**Մուստաֆա Քենանօղլու-** Պարոն դեսպան, դա ինձ բացարձակապես անհասկանալի է: Երեկ թուրքական հանրապետության Արտաքին գործերի նախարարության արևելյան դեպարտամենտի տնօրեն պարոն Նեջեթ Գեզելը այդ հարցի շուրջ բանակցել է ԽՍՀՄ-ի պարոն դեսպան Գրուբյակովի հետ և հաղորդել է մեզ, որ պարոն Գրուբյակովը հավանություն է տվել և ընդունել խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին Կոմյունիկեի նախագիծը:

<sup>44</sup> Բայուլբեն Յայլուկ (1922-2007): 1971-1974թթ. եղել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար:

**Երմոշին Պ.Կ.-** Պարոն դեսպան, վաղը կամ հաջորդ օրը ամեն ինչ պարզ կլինի, և մենք կլուծենք այդ հարցը:

Թուրքերը տեղյակ էին այն ամենին, ինչ տեղի էր ունենում Խորհրդային պատվիրակությունում<sup>45</sup> Կոմյունիկեի բովանդակության հարցի շուրջ, դրա համար էլ շտապում էին և ամեն ժամ ուժեղացնում էին ճնշումը և՛ Խորհրդային պատվիրակության, և՛ Խորհրդային դեսպանատան վրա:

Այլևս ոչ մի կասկած չէր մնացել, որ թուրքերը Խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության մասին նոր հայտարարագրի ընդունմանը բացառիկ կարևոր, վճռորոշ նշանակություն էին տալիս: Թուրքերը հեռատեսորեն էին նայում ապագային: Դեկտեմբերի 26-ին Խորհրդային պատվիրակության նախագահ, ԽՍՀՄ դեսպան Պ.Կ. Երմոշինը մոտ երկու ժամ գտնվում էր թուրքական պատվիրակության նախագահ, Թուրքական հանրապետության դեսպան Մուստաֆա Քենանօղլուի աշխատասենյակում: Թուրքական դեսպանի հետ էր թարգմանիչ Մեհմետ Կուրբանօղլուն, Խորհրդային դեսպանի հետ՝ պատվիրակության քարտուղար, կցորդ Դ.Ա. Վասիլևը: Այլ անձինք չկային: Մուստաֆա Քենանօղլուն կտրուկ ձևով Պ.Կ. Երմոշինից պահանջել էր պետական սահմանի վերասահմանագծումն ավարտելու մասին թուրքական Կոմյունիկեի ընդունումը: Այդ հարցին վերջ տրվեց: Խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխելիության մասին թուրքերի համար ձեռնտու քաղաքական հայտարարագիրն ընդունվեց: Դեկտեմբերի 27-ին, հատուկ ինքնաթիռով, վերասահմանագծման փաստաթղթերի և Կոմյունիկեի ստորագրման հանդիսությանը ներկա գտնվելու համար Մոսկվայից Անկարա ժամանեցին:

ԽՍՀՄ ԱԳՆ-ի գլխավոր քարտուղար-նախարարի տեղակալ – Յու.Ն. Չերմյակովը,

ԽՍՀՄ Ջինված Ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալ – զեներալ-գնդապետ Մ.Ս. Կոզլովը<sup>46</sup>,

ԽՍՀՄ սահմանապահ զորքերի պետ – զեներալ-լեյտենանտ Վ.Ա. Մատրոսովը<sup>47</sup>:

Նույն ինքնաթիռով դեկտեմբերի 26-27-ի գիշերը ինֆարկտից մահացած Թուրքիայի նախկին նախագահ Իսմեթ Ինենյուկի թաղմանը մասնակցելու համար Անկարա եկավ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ ընկ. Յասնովը<sup>48</sup>: Դեկտեմբերի 29-ին ժամը 12-ին, Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության շենքի կոնֆերենց-սրահում մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ Խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման մասին փաստաթղթերի ստորագրման և այդ առթիվ «ՍՍՀՄԱՆՆԵՐԻ ԱՆՁԵՆՍԻՏԵԼԻՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՍԲՈՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ<sup>49</sup>, իրավահավասարության, ինքնիշխանության, անկախության, սկզբունքների» հռչակումով Կոմյունիկեի ընդունման հանդիսությունը:

Մասնակցեցին.

ԽՍՀՄ-ի կողմից.

Խորհրդային պատվիրակությունը հետևյալ կազմով.

Նախագահ – ԽՍՀՄ դեսպան Պ.Կ. Երմոշին,

Նախագահի տեղակալ – զեներալ-մայոր Պ.Ա. Իվանով,

ԽՍՀՄ ԱԳՆ-ի Խորհրդական – Ա.Վ. Բեստունով,

ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի ներկայացուցիչ – գնդապետ Վ.Գ. Ժիրկով,

Կրացական ԽՍՀ ներկայացուցիչ – պատմական գիտությունների թեկնածու Օ.Ի. Գիգինեյշվիլի,

Քարտուղար – կցորդ Դ.Ա. Վասիլև,

Թարգմանիչ – Ա.Լ. Պրիշչեպով:

Գերատեսչությունների ներկայացուցիչներ.

ԽՍՀՄ ԱԳՆ գլխավոր քարտուղար-նախարարի տեղակալ – Յու.Ն. Չերմյակով,

ԽՍՀՄ զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալ – զեներալ-գնդապետ Մ.Ս. Կոզլով,

<sup>45</sup> Նշված բառերի տակ և ծախ լուսանցքում Ա. Քոչինյանը կրկնակի ընդգծել է:

<sup>46</sup> Կոզլով Միխայիլ Միխայիլի (1917-2004) – Խորհրդային ռազմական գործիչ, բանակի գեներալ (1979): 1969-1974թթ. եղել է ԽՍՀՄ զինված ուժերի Գլխավոր շտաբի գլխավոր օպերատիվ վարչության պետ, 1974-1979թթ.՝ Գլխավոր շտաբի պետի տեղակալ, 1979-1986թթ.՝ Գլխավոր շտաբի Ռազմական ակադեմիայի պետ:

<sup>47</sup> Մատրոսով Վադիմ Ալեքսանդրի (1917-1999) – Խորհրդային ռազմական գործիչ, բանակի գեներալ (1978): 1963-1967թթ. եղել է Անդրկովկասյան սահմանապահ օկրուգի պետ, 1967-1972թթ.՝ ԽՍՀՄ սահմանապահ զորքերի գլխավոր վարչության շտաբի պետ, 1972-1989թթ.՝ ԽՍՀՄ սահմանապահ զորքերի գլխավոր վարչության պետ-ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահի տեղակալ:

<sup>48</sup> Յասնով Միխայիլ Ալեքսեյի (1906-1991) – Խորհրդային պետական գործիչ: 1966-1985թթ. եղել է ՌԱՖՆԻՍ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ-ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ:

<sup>49</sup> Բնագրում մեծատառերով է տպագրված:

ԽՍՀՄ սահմանապահ զորքերի պետ – գեներալ-լեյտենանտ Վ.Ա. Մատրոսով,

Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան – Վ.Ֆ. Գրուբյակով,

Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանատան խորհրդական – Ուտկին,

ԽՍՀՄ ցամաքային զորքերի ռազմական կցորդ – գնդապետ Վ. Կրամարև,

ԽՍՀՄ ծովային ուժերի ռազմական կցորդ, առաջին կարգի կապիտան (ազգանունը չեն հիշում):

Հայկական ԽՍՀ ներկայացուցիչը դեկտեմբերի 29-ին՝ ժամը 8-ին, պաշտոնապես հայտարարեց պատվիրակության ղեկավարությանը և անդամներին, որ հանդիսությանը ներկա չի գտնվելու և փաստաթղթերի ստորագրմանը մասնակից չի լինելու: Դա արվեց որպես պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի ապօրինի ակտի դեմ ուղղված բողոքի նշան, և ամենազլխավորը՝ այն բանի համար, որպեսզի թուրքերը ինչպես նաև մեր դիվանագետները հասկանան, որ **հայկական հողերի մասին հարցը օրակարգից հանված չէ** (ընդգծումը մերն է - Ա.Գ.):

Թուրքիայի կողմից.

Թուրքական պատվիրակությունը հետևյալ կազմով.

Նախագահ – Թուրքական հանրապետության դեսպան Մուստաֆա Քենանօղլու,

Նախագահի տեղակալ – կենտրոնում ծառայող նահանգապետ Մեհմետ Թարջան,

Թուրքիայի ԱԳՆ խորհրդական – դոկտոր Գյոքհան Ուրսալ,

Անվտանգության Գլխավոր վարչության ներկայացուցիչ – Նեջեդ Կահրաման,

Ժանդարմերիայի գլխավոր վարչության ներկայացուցիչ – գնդապետ Խըղըր Աբփընար,

Գլխավոր շտաբի ներկայացուցիչ – գնդապետ Քյամիլ Աքսու,

Գլխավոր շտաբի քարտեզագրական ծառայության բաժնի պետ – գնդապետ Հայաթի Բալքան,

Ջրային պաշարների վարչության ավագ ինժեներ – Ռեջեպ Ուստյուներ,

Գլխավոր շտաբի քարտեզագրական վարչության քարտուղար, փոխգնդապետ Թուրան Օզալպ,

Թարգմանիչ – Մեհմետ Կուրբանօղլու:

Գերատեսչությունների ներկայացուցիչներ.

ԱԳՆ-ի գլխավոր քարտուղար-նախարարի առաջին տեղակալ – Իսմայիլ Էրեզ<sup>50</sup>,

ԱԳՆ-ի արևելյան դեպարտամենտի տնօրեն – Նեջեդ Գեզել,

ԱԳՆ-ի քաղաքական վարչության գլխավոր տնօրեն – Իսմայիլ Սոյսալ,

Գլխավոր շտաբի պետի տեղակալ-Գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ – կորպուսի գեներալ Ռեջան Էնգին,

Գլխավոր շտաբի պետական սահմանի պահպանության վարչության պետ – դիվիզիոնի գեներալ Շահիպ Օկուր:

Հանդիսությանը ժամանեցին մամուլի բազմաթիվ ներկայացուցիչներ, լուսանկարիչներ, թուրքական կինովավերագրությունը: Հանդիսությունն ավարտվեց Կոմյունիկեի ստորագրությամբ (տես Հավելված, թիվ 4, «Պրավդա» թերթի 1973թ. դեկտեմբերի 30-ի համարից քաղվածք), հիացական կենացներով, շանպայնով, իսկ հետո բանկետով՝ «Բեյուք Անկարա» ռեստորանում: Դեկտեմբերի 30-ին բոլոր թերթերում պետք է լինեին թուրքական «հասարակայնության» բազմաթիվ արձագանքներ: Այսպիսով, տեխնիկական հարցի լուծման ժամանակ՝ 1967-1973թթ. պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի կատարած աշխատանքների ընթացքում (որի անցումը սահմանագծվել է 1924-1926թթ. և հաստատվել 1926թ. գլխավոր արձանագրությամբ), թուրքերը մեր դիվանագետների թուլության, նրանց կողմից անհասկանալի զիջողականության շնորհիվ ստացան իրենց համար ևս մեկ կարևոր, ավելի հեղինակավոր փաստաթուղթ այն մասին, որ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կրկին ծանաչում է թուրքերի կողմից հայկական հողերի զավթումը:

Մարդասպանը և թալանչին ևս մեկ համաներում ստացավ: Ոչ ոք այլ մեկնաբանություն չի կարող տալ այդ փաստաթղթին<sup>51</sup>:

<sup>50</sup> Ի դեպ, 1975թ. հոկտեմբերի 24-ին «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» կազմակերպության անդամները իրենց արդարահատուց գործողությունն իրականացրին Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան դարձած այս նույն Իսմայիլ Էրեզի և նրա վարորդ Թալիփ Յեների նկատմամբ:

<sup>51</sup> Պարբերության դիմաց՝ ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

Թուրքերը՝ դիվանագիտական խաղի փորձառու խաղամուղները, երբեք չեն արհամարհում ավելորդ խաղաթղթերը:

Հնարավորության դեպքում թուրքական դիվանագիտությունն այդ նոր փաստաթղթով հիմնավորապես կուժեղացնի իր դիրքերը:

Մենք, ցավոք սրտի, չցանկացանք հասկանալ, որ «սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության» մասին նոր հռչակագիրը...թուրքական դիվանագիտությանն անհրաժեշտ է ոչ միայն ապագայի համար: Այսօր լուծվում է արևելյան վիլայեթների «յուրացման» ուղղությամբ խոշոր մասնավոր կապիտալ ներդրումների, դրանք ցորենի ինտենսիվ արտադրության և անասնապահության զարգացման գոտու վերածելու հարցը՝ խոշոր, մեքենայացված կալվածատիրական տիրույթների ստեղծման միջոցով: Թուրքերը այնքան էլ վստահ չեն, որ ընդմիջտ կմնան այդ հողերի տերերը, դրա համար էլ իրադրության և մասնավոր ձեռնարկատերերի տրամադրությունների հաշվառման միջոցով հարկավոր եղան «սահմանների անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության» թարմ երաշխիքներ<sup>52</sup>:

Կրողվեցուցիչ է ոչ միայն ԽՍՀՄ կառավարության հավանությունը չստացած՝ խորհրդա-թուրքական հարաբերությունների մասին նոր հայտարարագրի ստորագրման փաստն ինքնին: Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Վ. Գրուբյակովը խորհրդային պատվիրակության ղեկավարության բազմակի տեղեկատվությունից գիտեր պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտի մասին Կոմյունիկեի բովանդակության հարցի շուրջ պատվիրակության առանձին անդամների առարկությունների և առաջարկությունների մասին, սակայն արհամարհեց դրանք, ոչ մի նշանակություն չտվեց խորհրդային նախագծի պարտադիր անցկացման սկզբունքային կարևորությանը: Ավելին, Վ.Ֆ. Գրուբյակովը և Պ.Կ. Երմուշինը ռեզոնանսային փաստաթղթերի և Կոմյունիկեի ստորագրմանը հեղինակավոր վերադաս մարմիններից անհարկի կերպով ներկայացուցչական մեծ կազմի, ինչպես նաև ստորագրման բուն արարողության մեծ շքեղության և հանդիսավորության նախաձեռնողներն էին: Կարելի էր արարողակարգային բնույթի այդ արտաքին ղետալներին լուրջ նշանակություն չտալ, եթե դրանք չուժեղացնեին ընդունված Կոմյունիկեի ներքին բովանդակությունը: Խորհրդային պատվիրակությունը ամբողջությամբ և ժամկետում կատարեց խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման ԽՍՀՄ կառավարության հանձնարարությունը: Վերասահմանագծման փաստաթղթերը ներկայացվում են կողմերի կառավարություններին՝ վավերացման համար:

Ձեկուցագրին կցվում են.

1. ԽՍՀՄ ԱԳՆ-ի հաստատած խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին մամուլի հաղորդագրության խորհրդային նախագծի պատճենը,
2. Կոմյունիկեի առաջին թուրքական նախագծի թարգմանության պատճենը,
3. Կոմյունիկեի երկրորդ թուրքական նախագծի թարգմանության պատճենը,
4. «Պրավդա» թերթում 1973թ. դեկտեմբերի 30-ին հրապարակված՝ խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման աշխատանքների ավարտման մասին Կոմյունիկեի տեքստի և Վ. Վլադիմիրովի հոդվածի պատճենները:

Թուրքիայի գծով որոշ տեղեկատվական նյութեր հանրապետության վերադաս մարմիններին կներկայացվեն լրացուցիչ:

*Խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման  
խորհրդային պատվիրակությունում Հայկական ԽՍՀ ներկայացուցիչ  
Գ. Նալբանդյան [ստորագրություն]*

31 դեկտեմբերի 1973թ.

ՀԱՍ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թթ. 19-47: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն ուստերենից:

<sup>52</sup> Պարբերության դիմաց՝ ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

**ՀԱՎԵԼՎԱԾ  
ԹԻՎ 1**

Նախագիծ

**ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԾՈՒՆԴԱԾ  
ՀԱՄԵԼՎԱԾ

1926թ. անցկացված սահմանագծումից հետո սահմանային գետերի վրա տեղի ունեցած որոշ փոփոխությունների հետևանքով, ԽՍՀ Միության և Թուրքական Հանրապետության Կառավարությունների, ղեկավարվելով երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերությունների և համագործակցության զարգացման ցանկությամբ, 1967թ. փետրվարի 28-ին որոշեցին անցկացնել վերասահմանագծում և այդ նպատակով 1969թ. կազմավորեցին Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողով: Հանձնաժողովը ստուգեց և 1926թ. սահմանագծման փաստաթղթերին համապատասխանության բերեց ցամաքային սահմանի գծի անցումը և սահմանի գիծը գետերի տեղամասերում, որտեղ հունների փոփոխություն տեղի չէր ունեցել, ինչպես նաև որոշեց սահմանի գիծը գետային այն տեղամասերում, ուր գետերի հունների փոփոխություններ էին տեղի ունեցել: Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքն անցել է փոխըմբռնման և զործարար համագործակցության մթնոլորտում:

1973թ. դեկտեմբերի « » Անկարայում ստորագրվեցին Խորհրդա-թուրքական պետական սահմանի գծի անցման Արձանագրություն-նկարագրությունը և նրա հավելված՝ սահմանի քարտեզն ու սահմանային նշանների արձանագրությունները, ինչպես նաև սահմանային նշանների հսկողության, խնամքի, վերանորոգման և վերականգնման ու սահմանային կաժանների պահպանման մասին արձանագրությունները:

Սահմանի վերասահմանագծման փաստաթղթերը ստորագրեցին՝ Խորհրդային պատվիրակության նախագահ, դեսպան Պ.Կ. Երմոշչինը, թուրքական պատվիրակության նախագահ, դեսպան Մուստաֆա Քենանօղլուն:

Փաստաթղթերի ստորագրմանը ներկա էին.

- Խորհրդային կողմից –
- թուրքական կողմից –

Կողմերը համոզմունք են հայտնում այն մասին, որ պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքների հաջող ավարտը կնպաստի երկու կողմերի միջև բարեկամության ու բարի դրացիության հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 83, ք. 48: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

**ԹԻՎ 2**

թարգմանություն թուրքերենից

**ՄԱՍՈՒԼԻ ՀԱՍԱՐ**

Թուրք-խորհրդային սահմանի վերասահմանագծման մասին 1967թ. փետրվարի 28-ի Արձանագրությանը համապատասխան կազմավորված Համատեղ հանձնաժողովը ավարտեց 1969 թվականից շարունակվող իր աշխատանքը, և այսօր Արտաքին գործերի նախարարությունում պատվիրակությունների նախագահների կողմից ստորագրվեցին տարբեր փաստաթղթեր.

- Թուրքիայի կողմից՝ դեսպան Մուստաֆա Քենանօղլու,
  - Խորհրդային Միության կողմից՝ դեսպան Պ.Կ. Երմոշչին:
- Ստորագրման հանդիսությամբ ներկա էին...
- Այդ կապակցությամբ տարածվում է հետևյալ Կոմյունիկեն.

թիվ 2(27) հուլիս-սեպտեմբեր 2009

ՎԼԻՍ համահայկական հանդես

## ԿՈՍՅՈՒՆԻԿԵ

1965թ. մայիսին թուրքիա պաշտոնական այցի ժամանակ արտաքին գործերի խորհրդային նախարար պարոն Ա. Գրոմիկոն առաջարկեց ժամանակակից տեխնիկական պահանջներին և հնարավորություններին համապատասխան իրականացնել թուրք-խորհրդային սահմանի վերասահմանագծում: Այս առաջարկը թուրքիայում դրականորեն ընդունվեց և այդ կապակցությամբ 1967թ. փետրվարի 28-ին Անկարայում ստորագրվեց Արձանագրություն:

Այս Արձանագրությանը համապատասխան կազմավորված Համատեղ հանձնաժողովը 1969թ. հունվարին սկսեց և 1973թ. դեկտեմբերի « » ավարտեց իր աշխատանքը: Հենց նույն օրը Անկարայում պատվիրակությունների նախագահները՝ թուրքիայի կողմից դեսպան Մուստաֆա Քենանօղլուն և խորհրդային Միության կողմից դեսպան Պ.Կ. Երմոշինը – ստորագրեցին.

1. Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև պետական սահմանի գծի անցման Նկարագրություն Արձանագրությունը,

2. Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև պետական սահմանի քարտեզը,

3. Սահմանային նշանների Արձանագրությունները,

4. Արձանագրություն թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև՝ սահմանային նշանների հսկողության, խնամքի, վերանորոգման ու վերականգնման և սահմանային կաժանների պահպանման մասին:

Ստորագրման հանդիսությանը ներկա էին.

խորհրդային կողմից –

թուրքական կողմից –

Նախկինում կողմերը 1926թ. անցկացված սահմանագծումից հետո տեղի ունեցած սահմանային գետերի հունների փոփոխությունների կապակցությամբ առաջ եկած որոշ ուղղումների արդյունքում տարածքային կորուստները կանխելու նպատակով, 1972թ. մարտի 24-ին Անկարայում ստորագրել են «Արձանագրություն սահմանային գետերի վրա թուրք-խորհրդային պետական սահմանի գծի որոշման և տարածքային փոխհատուցման մասին»:

Բացի դրանից, թուրք-խորհրդային համատեղ հանձնաժողովի պատվիրակությունների նախագահները, իրենց տրված լիազորություններին համապատասխան, 1973թ. ապրիլի 17-ին, կրկին Անկարայում, ստորագրել են «Արձանագրություն թուրքական Հանրապետության Կառավարության և խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարության միջև՝ Սև ծովում թուրքական և խորհրդային տարածքային ջրերում ծովային սահմանի գծի որոշման մասին»: Նկատի ունենալով, որ երկու երկրների սահմանի գծի վրա, որը հիմնականում որոշվել է 1921թ. Կարսի և Մոսկվայի պայմանագրերով և ճշգրտվել է 1926թ. Թիֆլիսյան Արձանագրությամբ, անցած ավելի քան 40 տարիների ընթացքում, հատկապես սահմանային գետերի վրա, տեղի են ունեցել որոշ փոփոխություններ և այն կապակցությամբ, որ հին փաստաթղթերը չեն համապատասխանում ժամանակակից տեխնիկական պահանջներին, ծագեց սահմանի գծի նոր որոշման անհրաժեշտությունը, և դրա հետևանքով, կողմերի՝ փոխըմբռնման և համագործակցության ոգով իրականացրած աշխատանքները ավարտվել են դրական ու կառուցողական արդյունքներով, ստորագրվեցին հետևյալ փաստաթղթերը: Պայմանավորվող Կողմերը համոզված են, որ վերևում հիշատակված փաստաթղթերը, որոնց թիվը հասնում է 1100 հատի և որոնք ստորագրվել են թուրք-խորհրդային բարիդրացիության և համագործակցության զարգացման ու ամրապնդման ջանքերի ակնհայտ օրինակը դարձած՝ համատեղ աշխատանքի արդյունքում, իրենցից ներկայացնում են հույժ կարևոր քայլ թուրք-խորհրդային հարաբերություններում, որոնք զարգանում են երկու երկրների միջև խաղաղության և բարիդրացիության սկզբունքների ոգով՝ ավելի քան կեսդարյա ժամանակահատվածում: Պայմանավորվող Կողմերը գտնում են, որ թուրք-խորհրդային հարաբերություններում երկու երկրների օգտին զարգացող և անկախության, իրավահավասարության, տարածքային ամբողջականության և ներքին գործերին չխառնվելու սկզբունքների հարգման շրջանակներում ընթացող այս վերջին դրական առաջընթացը տարբեր ոլորտներում համագործակցության մեջ կարևոր ներդրում հանդիսացող նոր տարր է:

Պայմանավորվող Կողմերը հայտարարում են, որ պատմական նշանակության այս Արձանագրությունները, որոնք փաստագրում են *Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև խաղաղ և անվ-*

տանգ անփոփոխ սահմանը<sup>53</sup>, երկու երկրների միջև հարաբերություններում գերիշխող բարիդրացիության և անվտանգության մթնոլորտի սկզբունքի երկարատև նշանն են:

ՀԱՄ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թթ. 49-51: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

**ԹԻՎ 3**

*թարգմանություն բուրբերենից*

**ՀԱՄԱՏԵՂ ԿՈՍՅՈՒՆԻԿԵ  
ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1965թ. մայիսին ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարար պ-րն Ա.Գրոմիկոյի Թուրքիա պաշտոնական այցի ժամանակ երկու երկրների Կառավարությունների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց թուրք-խորհրդային սահմանի վերասահմանագծման մասին և 1967թ. փետրվարի 28-ին Անկարայում այդ հարցի վերաբերյալ Արձանագրություն ստորագրվեց:

Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծումը, որը որոշվել էր 1921թ. Մոսկովյան և Կարսի պայմանագրերով և սահմանագծվել 1926 թվականին, անհրաժեշտ դարձավ այն պատճառով, որ դրանից հետո անցած տարիների ընթացքում սահմանային գետերի հունների որոշ փոփոխություններ էին տեղի ունեցել, ինչպես նաև այն պատճառով, որ 1926թ. սահմանագծման փաստաթղթերը չէին համապատասխանում ժամանակակից տեխնիկական պահանջներին: 1967թ. Արձանագրությանը համապատասխան կազմավորված Թուրք-խորհրդային սահմանի վերասահմանագծման համատեղ հանձնաժողովը 1969թ. հունվարին սկսեց և 1973թ. դեկտեմբերի « » ավարտեց իր աշխատանքը: Փոխհասկացողության և համագործակցության մթնոլորտում տեղի ունեցած և դրական ու կառուցողական արդյունքով ավարտված Կողմերի աշխատանքների արդյունքում 1973թ. դեկտեմբերի « » Անկարայում, պատվիրակությունների նախագահները, Թուրքիայի կողմից՝ դեսպան Մուստաֆա Քենամօղլուն և Խորհրդային Միության կողմից՝ դեսպան Պ.Կ. Երմոչինը – ստորագրեցին հետևյալ փաստաթղթերը.

1. Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև պետական սահմանի գծի անցման և կարագրություն-Արձանագրությունը,
2. Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև պետական սահմանի քարտեզը,
3. Սահմանային նշանների Արձանագրությունները,
4. Արձանագրություն Թուրքական Հանրապետության և ԽՍՀՄ միջև՝ սահմանային նշանների հսկողության, խնամքի, վերանորոգման ու վերականգման ու սահմանային կածանների պահպանման մասին:

Ստորագրման հանդիսությանը ներկա էին.

- թուրքական կողմից –
- խորհրդային կողմից –

Նախկինում Կողմերը, որպեսզի գետերի տեղամասերում սահմանի գծի անցկացման ժամանակ բացառեն տարածքային կորուստներն այնտեղ, որտեղ 1926թ. սահմանի նշումից հետո տեղի են ունեցել հունների փոփոխություններ, 1972թ. մարտի 24-ին Անկարայում ստորագրեցին «Արձանագրություն սահմանային գետերի վրա թուրք-խորհրդային պետական սահմանի գծի որոշման և տարածքային փոխհատուցման մասին»: Դրանից բացի, 1973թ. ապրիլի 17-ին ստորագրվեց «Արձանագրություն Թուրքական Հանրապետության Կառավարության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարության միջև՝ Սև ծովում թուրքական և խորհրդային տարածքային ջրերում ծովային սահմանի գծի որոշման մասին»:

Կողմերը հանդգնած են, որ այս համատեղ աշխատանքի արդյունքում ստորագրված պատմական նշանակություն ունեցող Արձանագրությունները, որոնք Թուրքական Հանրապետության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջև խաղաղության և անվտանգության պահպանման նպատակներով փաստագրում են նրանց անփոփոխ սահմանը<sup>54</sup>, հույժ նշանակալից ձեռքբերում են

<sup>53</sup> Ընդգծված բառերի դիմաց ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը նույնպես ընդգծել է:

<sup>54</sup> Պարբերության դիմաց ձախ լուսանցքում, Ա. Քոչինյանը ընդգծել է:

ավելի քան կեսդարյա ժամանակահատվածի ընթացքում երկու երկրների միջև խաղաղության և բարիդրացիության սկզբունքների ոգով զարգացող թուրք-խորհրդային հարաբերություններում:

Կողմերը գտնում են, որ անկախության, իրավահավասարության, տարածքային ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հարգման շրջանակներում երկու երկրների օգտին զարգացող թուրք-խորհրդային հարաբերություններում ձեռք բերված այս դրական առաջընթացը տարբեր ոլորտներում նրանց համագործակցության մեջ կարևոր ներդրման նոր տարր է:

*Թուրքերենից թարգմանեց՝ Դ. Վասիլև*

ՀԱԱ, ֆ. 1, գ. 53, գ. 83, թթ. 52-53: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

#### ԹԻՎ 4

### ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏՈՒ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Թուրքական Հանրապետության կառավարությունները, ղեկավարվելով երկու երկրների միջև հարաբերությունները խաղաղության, բարեկամության և բարիդրացիության ավանդույթներին համապատասխան զարգացնելու ցանկությամբ, պայմանավորվեցին խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման վերաբերյալ և այդ նպատակով 1967թ. փետրվարի 28-ին Անկարայում ստորագրեցին համապատասխան Արձանագրություն:

Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծումը՝ որոշված 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով և սահմանագծված 1926 թվականին, ամիրաժեշտ դարձավ այն բանի հետ կապված, որ այդ ժամանակից անցած տարիների ընթացքում տեղի են ունեցել սահմանային գետերի հունների որոշ փոփոխություններ, ինչպես նաև այն առիթով, որ 1926թ. սահմանագծման փաստաթղթերը չէին համապատասխանում ժամանակակից տեխնիկական պահանջներին:

1967թ. Արձանագրությանը համապատասխան ձևավորված պետական սահմանի վերասահմանագծման խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը 1969թ. սկսեց և 1973թ. ղեկտեմբերին ավարտեց իր աշխատանքը: Փոխընթացման և համագործակցության մթնոլորտում անցկացված աշխատանքի հետևանքով, որն ավարտվեց դրական և կառուցողական արդյունքներով, 1973թ. ղեկտեմբերի 29-ին պատվիրակությունների ներկայացուցիչները՝ խորհրդային Միության կողմից ղեսպան Պ.Կ. Երմոշինը և Թուրքիայի կողմից՝ ղեսպան Մուստաֆա Քենանօղլուն, Անկարայում ստորագրեցին հետևյալ փաստաթղթերը.

1. ԽՍՀՄ և Թուրքական Հանրապետության միջև պետական սահմանի գծի անցման Արձանագրություն-Նկարագրություն,
2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Թուրքական Հանրապետության միջև պետական սահմանի քարտեզը,
3. Սահմանային նշանների Արձանագրությունները,
4. Արձանագրություն ԽՍՀՄ և Թուրքական Հանրապետության միջև՝ սահմանային նշանների հսկողության, խնամքի, վերանորոգման ու վերականգնման և սահմանային կաժանների պահպանման մասին<sup>55</sup>:
5. Ստորագրման հանդիսությանը ներկա էին. խորհրդային կողմից՝ ԽՍՀՄ ԱԳՆ գլխավոր քարտուղար Յու.Ն. Չեռնյակովը, Թուրքիայում ԽՍՀՄ ղեսպան Վ.Ֆ. Գրուբյակովը, ԽՍՀՄ Ջինված Ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-գնդապետ Մ.Մ. Կոզլովը և ԽՍՀՄ սահմանապահ զորքերի պետ գեներալ-լեյտենանտ Վ.Ա. Մատրոսովը, թուրքական կողմից՝ Թուրքիայի ԱԳՆ գլխավոր քարտուղար Իսմայիլ Էրեզը, Թուրքիայի ԱԳՆ Քաղաքական վարչության գլխավոր տնօրեն Իսմայիլ Սոյսալը, կորպուսային գեներալ Ռեջան Էնգինը և դիվիզիոնի գեներալ Ռահիպ Օկուրը:

Նախկինում կողմերը, որպեսզի սահմանային գծի անցկացման ժամանակ բացառեն տարածքային կորուստները գետերի տեղամասերում, ուր 1926թ. սահմանագծումից հետո տեղի են ունեցել հունների փոփոխություններ, 1972թ. մարտի 24-ին Անկարայում ստորագրեցին Արձանագրություն սահմանային գետերի

<sup>55</sup> Այս արձանագրության մեջ կրկին որևէ քաղաքական դրույթ չկար: Ի դեպ, այն կնքել էին նույն Երմոշինը և Քենանօղլուն: Ուժի մեջ է մտել 1975թ. ապրիլի 29-ին: Տեքստը տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 5, գ. 12, թթ. 94-103:

վրա խորհրդա-թուրքական պետական սահմանի գծի որոշման և տարածքային փոխհատուցման մասին: Դրանից բացի, 1973թ. ապրիլի 17-ին ստորագրվեց Արձանագրություն խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարության և Թուրքական Հանրապետության կառավարության միջև Սև ծովում խորհրդային և թուրքական տարածքային ջրերում ծովային սահմանի գծի որոշման մասին<sup>56</sup>:

Կողմերը գտնուում են, որ անկախության, ինքնիշխանության, իրավահավասարության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության<sup>57</sup>, ներքին գործերին չխառնվելու սկզբունքների հիման վրա զարգացող և երկու երկրների շահերից բխող խորհրդա-թուրքական հարաբերություններում առաջընթաց ներկայացնող ճշյալ արձանագրությունների ստորագրումը նոր կարևոր ներդրում է խորհրդային Միության և Թուրքիայի համագործակցության մեջ:

ՏԱՍՍ<sup>58</sup>

*Քաղվածք «Պրավդա» թերթի 1973թ. դեկտեմբերի 30-ի համարից<sup>59</sup>*

ՀԱՍ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թթ. 54-55: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

## ԹԻՎ 5

### ԲԱՐԻԴՐԱՑԻՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅՑՅՆԵՐՈՎ<sup>60</sup>

Անկարայում դեկտեմբերի 29-ին ստորագրված ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև պետական սահմանին վերաբերող խորհրդա-թուրքական փաստաթղթերը կարևոր նշանակություն ունեն երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման համար: [Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքին մասնակցած Երկու երկրների ներկայացուցիչները նշում են, որ]<sup>61</sup> հանձնաժողովի աշխատանքը անցել է փոխընթերցման և գործարար համագործակցության մթնոլորտում:

Հանձնաժողովի բարդ և մանրակրկիտ աշխատանքի հաջող ավարտմանը նպաստել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահ Ն. Վ. Պոդգորնու անցյալ տարվա այցը Թուրքական Հանրապետություն: Այցի արդյունքում հրապարակված խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Թուրքական Հանրապետության միջև բարիդրացիական հարաբերությունների սկզբունքների մասին հռչակագիրը արձանագրել է տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը որպես մեր երկրների միջև հարաբերությունների անխախտ նորմ<sup>62</sup> հարգելու կողմերի փոխադարձ ձգտումը: Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման աշխատանքը, ինչպես նշվում է խորհրդա-թուրքական համատեղ Կոմյունիկեում, բարիդրացիական հարաբերությունների զարգացման արտահայտություն է:

Խորհրդա-թուրքական սահմանային նոր փաստաթղթերի ստորագրությունը վկայում է այն մասին, որ բարի կամքի առկայության դեպքում կարելի է հաջողությամբ լուծել ամենից բարդ միջպետական խնդիրները, որոնց թվին են պատկանում սահմանային հարցերը: Վերասահմանագծման ավարտը, անկասկած, կնպաստի ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև վերջին տարիներին նկատելիորեն բարելավվող հարաբերությունների հետագա կայունացմանը<sup>63</sup>:

### Վ. Վաղիմիրով

*«Պրավդա», 1973թ. դեկտեմբերի 30:*

ՀԱՍ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թ. 56: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

<sup>56</sup> Այս արձանագրության մեջ կրկին որևէ քաղաքական դրույթ չկար: Ի դեպ, սա նույնպես կնքել էին Երմոշինը և Քեմանոլուն: Տեքստը տես ՀԱՍ, ֆ. 326, ց. 5, գ. 12, թթ. 91-92:

<sup>57</sup> Նշված բառերի տակ Ա. Քոչինյանը ընդգծել է:

<sup>58</sup> Խորհրդային Միության Հեռագրական գործակալություն:

<sup>59</sup> Մեր տրամադրության տակ եղած «Պրավդա» թերթում, որը տպագրվել է Երևանում, այս տեքստը հրապարակված է դեկտեմբերի 31-ի համարում, թ. 365, էջ 4: Մինչդեռ, մոսկովյան հրապարակումը եղել է դեկտեմբերի 30-ին: Թեպետ նշված է «Քաղվածք», բայց հրապարակվում է ամբողջությամբ:

<sup>60</sup> Մեր տրամադրության տակ եղած «Պրավդա» թերթի համարում, որ տպագրվել է Երևանում, այս հոդվածը հրապարակված է դեկտեմբերի 31-ի համարում, թիվ. 365, էջ 4, և վերնագրված է հետևյալ կերպ. «Բարիդրացիության սկզբունքների վրա»: Մինչդեռ, մոսկովյան հրապարակումը եղել է դեկտեմբերի 30-ին:

<sup>61</sup> Թերթի մեր տեսած օրինակում ուղիղ փակագծերի մեջ առնված հատվածը չկա:

<sup>62</sup> «Տարածքային ամբողջականությունը սահմանների անձեռնմխելիությունը» բառերի տակ կարմիր մատիտով Ա. Քոչինյանը ընդգծել է:

<sup>63</sup> Թերթի մեր տեսած օրինակում վերջին նախադասությունը չկա:

## Summary

### THE QUESTION OF THE ARMENIAN LANDS AT THE SOVIET-TURKISH NEGOTIATIONS (1967-1973) The secret report of Colonel Gurgen Nalbandyan and parallel documents

*A. H.*

The Russian-Turkish Treaty of March 16 1921 (known as the Moscow Treaty) and based on it and enforced upon Soviet Armenia the Kars Treaty of October 13 1921 were originally illegal acts aimed the partition of the Republic of Armenia third countries. These treaties became the subject of controversies on the one hand between Turkey and the USSR and on the other – Soviet Armenia and the central authorities of the USSR. They became critical especially during the works (1969-1973) of the Soviet-Turkish joint commission formed according to the Protocol (signed on February 28 1967) about re-delineation of the boundary between the USSR and Turkey.

At the last session (December 1973) of the joint commission, the Turkish side was doing everything to coax out additional assurances from the USSR about the inviolability of the Soviet-Turkish boundary, and finally had achieved its goal. In December 1973, when celebrations took place in the conference-hall of the foreign ministry of Turkey on occasion of signing the documents, and, particularly, the communiqué containing the article about mutual “principles of inviolability of boundaries, territorial integrity, independence, sovereignty, equality”, a member of the USSR joint delegation (which arrived in Ankara), the representative of Soviet Armenia, Colonel Gurgen Nalbandyan openly stood up against the demands of the Turkish side and the compliant position of the USSR delegation. Unlike his colleague, the representative of Soviet Georgia, historian O. Giginayshvili who betrayed at the last moment, Gurgen Nalbandyan refused to sign the Soviet-Turkish final communiqué, as well as to participate in the official ceremony. Moreover, after the closure of the final session of the joint commission, on December 31, 1973, Gurgen Nalbandyan returning to Yerevan, in his report presented to the authorities of Soviet Armenia, courageously criticized the behavior of the USSR delegation’s leadership which, almost under the open pressure of the Ministry of foreign affairs of Turkey, exceeded its authority and included political theses in the document of a technical character about re-delineation of the Soviet-Turkish boundary.